Հայկական գիտահետազոտական հանգույց
Armenian Research & Academic Repository

Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

This work is licensed under a Creative Commons Attribution-NonComercial 3.0 Unported (CC BY-NC 3.0) **license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով

ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

Ltn
551

1 9 99

ՀՐԱՊԱՐԱԿԱԿԱՆ

ՊԱՏԱՄԽԱՆԷ ԸՆԴԴԷՄ ԶՐՊԱՐՏՈՒԹԵԱՆՑ

ԴԱՐԱՂ ՂԱՂՕՑԻ

ԳՐԵՑԱ

Ռոստոմ Երզնկեանց։

21247

Ց Փ Խ Ի Ս

1862

Ի ՏՊԱՐԱՆԻ ԳԱԲՐԻԷԼԻ, ՄԵԼՔՈՒՄԵԱՆՑ ԵՒ ՀԱՄԲԱՐՁՈՒՄԱՑ ԷՆՏԻԱՖԵԱՆՑ

ՀԱՅԿ. ՍՍՀ ԳԱ Մատենադարան
Гос. библиотека
им. А. Мраморяна
ЕРЕВАН-ԵՐԵՎԱՆ

29 553 9551-60

ՀՐԱՊԱՐԱԿԱԿԱՆ

Պատասխանի ընդդէմ գրպարտութեանց, որ տպած է «ԿՈՒՈՒՆԿ» ամսագրումը, այս 1862 թուականի յունիս ամսուայ 6-դ տետրակումը։

«Տէր փրկեա զանձն իմ ի շրթանց նենգաւորաց եւ ի լեզուէ չար է —Զինչ տայցի քեզ կամ զինչ յաւելցի լեզու նենգաւոր։ Սաղ. ճԺԹ. 2, 3. (1)։

Այս օրերումս կարդացինք մէկ փոքրիկ ժողովքում «Կռունկ» ամսագրի 6-դ տետրակը, որի մէջ 454–498 երեսը տպած էր երդէն և բարակ քաղքցի դաբա Ղազոյի մասլահաթը թիֆլիզու քահանայից վրա. մէկ կողմից զարմանում էինք, թէ քրիստոնեայ մարդը, ի՞նչպէս կարելի է, մինչի վերջին կէտը էապէս խայտառակէ հոգևորականներին, և մէկ կողմից էլ նայելաջ ծիծաղում էինք էնպէսի ցնդուած խօսելու վրա, աւելի էնդուր վրա, թէ դաբաղն էլ. էնքան խելք ու դատողութիւն ունենայ, ու բան գրել գիտենայ, որ գրականական հանդէսի մէջ յայտնի մէյդան դուրս գայ։ Մեզանից մէկն ասաց, թէ «Գիւրդ զգինան բէլա օղուլ, ալլահ մին բարաքատաթ վէրսուն։

(1) Տէր Աստուած փրկեր իմ անձը նենգաւոր շրթունքներից եւ չար լեզուից։ Ինչ կըտուայ քեզ կամ ինչ կաւելանայ նենգաւոր լեզու։ Սաղ. ճԺԹ, 2, 3։

ս յօդուածը, ինչպէս երևում է, դաբաղի գրած չէ, այլ գրել է մէկ թերուսումն տղայ, որի յանդգնութիւնը ցոյց է տալիս բոլոր գրուածքը, և ճշմարիտն ասեմ, ամէնքս էլ էնպիսի բարկութեամբ լցուեցանք, թէ որ գրողը էն սրհաթին ձեռներս էր ընկել լաւ կըներկէինք։ Գրողը վախենալուց ծածկել է իւր անունը, և գրել է դաբաղ Ղազոյի անունով. կարելի՞ է հաւատան թէ դաբաղը կարողանայ էնպէս գրել, կամ սուրբ ցաւոքի գրուածքը բառ առ բառ և առանց սխալի միտքը պահել։ Ղազոն ձայն է տալիս իր աղքատութիւնը և պարտք ունենալը, հաւատալու բան է՞, որ նա իրա բանու գործը թողած, քահանայից վրա էնպիսի խայտառակ բաներ գրէ։— Չէ՛, չէ, սրա չարտիզու գրողը դաբաղ չէ, այլ հիմիկուան ջահէլ իմաստակներից մէկն է, կարելի է ուէրտէրի տղայ էլ ըլնի, և ինչպէս երևում է, նա իրա ուսումը միայն թիֆլիզումն է առել, էն էլ կիսատ-պռատ, ըստ որում գրուած է, թէ «ցանձըն չարտրուեստ իմաստութիւն ոչ մոցէ», այսինքն, չարութիւն ունեցող անձնի մէջ իմաստութիւն չիմանի։ Էս աշկարայ երևում է նրա գրածից։ Մէկ քանիսը կանդրապէս իմաստակներ, իրա դասընկերներ, որ երբ պիտի կծեն մէկին կամ միւսին, օձի պէս կանաչ խոտումն են ծածկվում, որ ոչով չըտեսնէ, վասն որոյ և գրում են իրանց յօդուածների տակը. քաղկցի դաբաղ Ղազո. քաղկցի Շաքար Մանուշակեանց, քաղկցի վաճառական Գէօ Ա.Էֆեմով և այլն։

Ճշմարիտ մարդը կըփոխի՞ իր անունը.—ամենևին չէ.—Քրիստոսի Ա.Եւտարանի աշակերտը, ճշմարտութիւն սիրողը կըծածկէ՞ իր անունը—ոչ երբէք. Քրիստոս հրամայում է, թէ՝ «Ով որ կըսիրէ ճշմարտութիւն, ղէպի լոյսը կըգայ, որ յայտնի ըլնին նրան

մոքով է հնչակի խոցուռակում հոգևորականներին, և էաւբ զրելը յանձնեցին ինձ։

Ցողովքը արձակիլուց յետոյ գնացի մեր տուն, ուր տոյ սեղի վրա գրած է «Կուսնիքը» վեր կալայ, երկու երիք անդամ կարդացի մեծ ուշադրութեամբ, քրիստէրելով ամեն մի բառն ու կէտը. յանկարծ միտքս եկաւ Գրիգորոսի խօսքը, թէ՝ «Մարդ բարի՛ի բարի գանձուց սրտի իւրոյ բերէ զբարի, և մարդ չար՝ ՛ի չարէն բերէ զչար. քանզի ՛ի յաւելուածոյ սրտին խօսի բերան նորա։» Ղուկ. Զ. 45։ (3) Զզրոյց էն գրուածքի մէջ ոչինչ բարի բան, այլ չար և ամենաչար. բան ուրուտ գարաղ Ղազն անկարդ խօսելով ընդ հանրապետութիւնին կընկանիրանց, ազգիրանց, հաւքարնելի, հաւատարանելի և քահանայից վրա, չէ կարդացել պահել սրտի աւելցուքը և էդ էլ . . . է շուտ շուտ յիշատակելով լօթռանդ բառը, բամբասելով անմեղ հասարակութիւնը, որպէս թէ ասում են ուսումն առածներին, եր. 453. «Ամա իս զիսիմ, ուրիշ երկրին մեր խալխը մէքիչ ուրիշ աչքով է մոկի տալ, հէնց զիսուն թէ մարդ գնայ էնդի, հոգով մարմնով կուկորչիս այսինքն հաւատահան կընի։ Փառք Աստուծոյ որ Ղազն գաղաղխանումը թատրի մէջ աշ գրած կաշիքը հարելով ուրիշ երկիրների վրա ուղիղ հայեցուածք է ունեցել, խակ ողջ հասարակութիւնը, յորոց ազնուականութիւնը, քաղաքացիք, վաճառականները, որ Եւրոպիու, մանաւանդ Ռուսաստանի զանազան քաղաքներ են պատել և ապրելով կայել, ծուռը հայեցուածք ունին, — կարդացողը

(3) Բարի մարդը իւրա սրտի գանձարանից բերում է բարի բան, և չար մարդը (չար գանձարանից) բերում է չար (բան), պատճառ որ, սրտի աւելցուածն է խօսում նրա բերանը. Ղուկ. Զ. 45.

պատէ էս ընդհանրական անարդանքը, նոյն եր. «Մէկ էլ վուր դիտաւորներին միր խալխը լօթռանլ է ասում. մէկը, մէքիշբանաւորիւմ է . . . . լօթռանդ է, կօսէ։ Սր. 439, վո՞ր մէ բանն ասիմ թէ, էսէնց չէ, ֆհէնց պիտի . . . դաւն էլ լօթռանդիս կօսէ, ախար էսէնց լօթռանդ ասելի, միլ ինք ֆնաս տալի, գիտնաւորներու սիրտը կատրիւմ է . . . շնորհակալութեան մագիտար միր խալխը քար գործ է անում նրանց . . . . Գանա ասիշ նրկիր, կօսէ, վուր կէհա. մարդ հաւատը պիտի փոխէ, ու ասէ գիտնաւոր իմ։ Գիտնաւորութիւնը հաւատը փոխելալ է։ Թէ վուր էստիէվիս վուրդուտ լաւ սորվեցնել տալ ամէն լաւ բանիրը, թէ միր հաւատը ու թէ միր լեզուն, իժում վուր վի կալնիս, էն ջառուջհանդամն էլ զըկիս նրան, հաջաթ չէ»։

Բարեմի՛տ ընթերցող, էս գրուածքի մէջ մէկ քանի ծածկած մարքեր ենք անում՝ 1, ուսման վրա խօսելու ժամանակը ի՞նչ հարկաւորութիւն է տիրում զաբալին, լօթռանդութիւն կամ հաւատափոխութիւն բառերը մէջ բերել. ամենքին յայտնի է, որ Թիֆլիսցիք իրանց տղերանցն ու զարկում են Ռուսատանի կայարանական ուսումնարանները թէ գինուորական և թէ քաղաքական, և վերջապէս տեսարց Լազարեանց Մոսկուայի ճեմարանը, մի՞ թէ . . . . . .

. . . Էնտեղի ուսումնարանից դուրս եկածներին Թիֆլիսցու Հայքը լօթռանդ և հաւատափոխ են ասում և թէ «վուր էստիէվիս վուրդուտ լաւ սորվեցնել տալ տըվիր ամէն լաւ բանիրը, թէ միր հաւատը ու թէ միր լեզուն, իժում վուր վի կալնիս էն ջառուջհանդամն էլ զըկիս նրան, հաջաթ չէ»։ սա հաստատում

է վերևի բանը, որ եթէ մեր որդիներանցը 8 տարեկանից մինչև 12 տարեկանը ուղարկենք Եւրոպայ ուսումն առնելու, որ նրանք չի գիտենալով իրանց հաւատը և լեզուն, պիտի հաւատափոխ անեն, և ազգի ուսումնարանները դաբաղի աշ դրած լեզու չառուչ հանդամէ անուանում, ինչ է կամենում է օձալեզու Ղազոն ասել, ով արդեօք պատիւ չէ տուած ուսումնականներին, որք Ռուսաստան աւարտել են ուսման ընթացքը, մենք նրանցը միշտ ազգասէր ենք ասել և ամ ազգային գործի մէջ դէպի նրանց դիմել, բայց թէ նրանք, իրանց ազգասիրական գործքը չեն կարողացել յառաջացնել, էգ նրանց մեղը չէ, այլ դաբաղ Ղազոյի պէս մի քանի մարդկերանց, որք արդելք են էլած միշտ։ Սիրելի եղբարք, մենք տեսնում ենք որ օրէց օր, ոչ թէ միայն թիֆլիսեցիք, այլ և գեղացիք աւելի են աշխատում ուղարկել իւրեանց որդիքը Ռուսաստան ուսումն առնելու, ուրեմն ո՞ւր կըմնայ նրանց լօթռանդ ասելը։ Ամօթ չէ՞ էապիսի զուր խօսակցութիւնը։ Զ. Ռ-սման վրա խօսողը, պիտի պարզ հայեցուածքով, պարզ ոճով, պարզ խօսքերով հասկացնի ժողովրդեանը ուսման լաւութիւնը, նրա շահաբեր պտուղը, նրա օգուտը, և ոչ թէ որ և իցէ կրօնքի կամ հաւատափոխութեան խօսքեր մէջ բերել, որք են սիրտ պղտորող և բոլորովին անհամաձայն խօսակցութեան մտքին։ Նա ասում է թէ լաւ կըլինի որ համքարների մէջ փողհաւաքենք և հարուստներն էլ հարիւր թումման փոխան, ուրեմն էլ ինչ հարկաւոր էր յիշել շուտ շուտ լօթռանդ բառը. երևում է, թէ ինչ մեր ազգի մէջ կարդացողներ կան թէ շատ թէ քիչ, թէ հոգևորական, թէ աշխարհական, թէ թիֆլիսցի և թէ օտար երկրացի Ղազոյի խօսքով լօթռանդներ են և. էատուրով

վճռում է, որ էլ ոչով էդ խօսքի պատճառաւ իրա որդին չըտայ ուսում առնելու, որ լօթռանդ չ'ասեն, որովհետև լօթռանդ ասող ողջ թիֆլիզեցերու համար է գրում, չէ թէ մէկ քանի իրան նման աննշան և կոտոր ընկած դաբաղների համար: Բայց միտքը էտուր համար չէ. Քրիստոսի հրամայածի պէս, իրա սրտի գանձարանը բաց է արել, և սրտի աւելցուքը խօսում է, յիշելով առանց մէկ օրինաւոր և հաստատ պատճառի լօթռանդ բառը: Յ. Թիֆլիզու հոգևորականներին, մի՞թէ Թիֆլիզու Հայքը չէին գիտի և չէին ճանաչում, որ դաբաղը հիմի նոր է ուզում ճանչնալ տայ. ահա անխելքութիւն, ամէն քահանայ իրա վիճակած ժողովուրդը ունէ և ամէն ժողովուրդ իրա տէրտէրին շատ լաւ է ճանաչում, մինչև էսօր պատուել է և պատվում է, մինչև էսօր Քրիստոսի փոխանորդ ընդունել է և ընդունում է. հէնց խելօքը դաբաղը դուրս եկաւ, որ նոր է ուզում ժողովրդի աչքը բաց անէ, թէ տէրտէրները վատ են:

Ուստա Ղազօն, ժողովրդեան սիրտը աւելի լաւ կարելու և բոլորովին հովացնելու քահանայից մէն, իրա խայտառակ գրուածքի մէջ դուրս է բերել սուրբ Յակոբի գրածը քահանայից վրա, որ ժողովուրդը իբրև հաստատութիւն նրա խօսածներին ասէ, թէ հէնց էն գլխից մինչև էս գլուխը մեր հոգևորականները դիմի անպիտաններ են եղած, և սրանով սառեցնեն հոգևորականներից, ու բաժան բաժանութիւն գցեն տէրտէրների ու ժողովրդի մէջ: Բայց չէ իմանում, էն դաբաղը, որ սուրբ Յակոբը, Հայոց հայրապետ չէ, այլ Ասորոց. նա ունէր իրա առանձին ազգը և քահա-

նայէ՝ որոնց անկարգութիւնը գրել է. իսկ Հայաստանի Հայրապետն էր սուրբ Գրիգոր Լուսաւորիչը մի և նոյն դարուն մը՝ որ իրա քահանայից վրա չունի ոչինչ գանգատ դրած, և եթէ կայ՝ թող դաբաղ Զաղօն ցոյց տայ։ Դաբաղի էն ծրածը էնպէս է՝ որ եթէ Ռուսաց մեարօպալիտը՝ կամ Յունաց պատրիարքը՝ կամ Պապը իրանց հոգևորականների վրա լաւ կամ վատ բան գրեն՝ ու մէկը մեր միջից դուրս գայ դաբաղի պէս Հայոց հոգևորականների վրա գցէ՝—այ դաբաղ՝ Հայն ոչ՝ Ասորին ոչ՝ սրտիդ մաղձը պիտի թափես՝ էն ատա՝ թէ չէ՝ ի՞նչ ես խօսում՝ որ Ասորուց քահանայից անկարգութեանց կեղտը աշխատում ես քըսել մեր հոգևորականներին։ Զըլնի՞ թէ ասես՝ որ սուրբ Յակոբին մեր եկեղեցին ծանում է՝ ուրեմն մերն է։ Մեր եկեղեցին մէկ ընելով դաւանութեամբ՝ կրօնքով և աւանդութեամբ ամեն սուրբերին ծանում է՝ ինչպէս Լատինացւոց՝ Յունաց՝ Վրաց՝ նոյնպէս և Ասորւոց՝ սրա հաստատութեան համար կարդա՛ ծանացոյցը և համեմատէ՝ Յայսմաւուրքի հետ՝ թէ ո՞վ՝ ի՞նչ ազգից է՝ և էն ժամանակ կ'իմանաս քո ստութիւնը և մեր ճշմարտութիւնը։ Բայց թող դիտենայ ազգը՝ որ սուրբ Յակոբը չէ Հայոց Հայրապետ՝ այլ սուրբ Գրիգոր Լուսաւորիչն է և նրա՝ աջորդները .... և սուրբ Յակոբի պատմութիւնը՝ Հայոց ազգի՝ ոչ մէկ պատմութեան մէջ չըկայ գրած՝ միայն նրա «Զգօն» գրքի վերջումը՝ ուրեմն և նրա գրածը Հայոց քահանայից վրա չէ՝ և իրաւունք էլ չ'ունէր գրելու՝ որպէս ուրիշապզի Հայրապետ-Ամաչում ես հիմիկ՝ ուստա Զաղօ՝ որ այդպիսի խաբէութեամբ աշխատում ես անմեղ ժողովրդեան սիրտը կտրելու և հեռացնելու հոգևորականներից։ Մենք չենք բերում էստեղ սուրբ Յակոբի գրը-

ուսածքից և ուրիշ մեր հայրապետներից ոչինչ բան, այլ պիտի խօսենք հին և նոր կտակարանից, որ բոլոր քրիստոնեայ ազգերը միատեսակ ընդունում են։ Դու էլ ականջդ բաց արա և լաւ հասկացիր։

Ճշմարիտ քրիստոնեայ կըհամարուի նա, ով որ Քրիստոսի սուրբ Աւետարանի աշակերտ է, ով որ ամենայն սրտով և ամենայն զօրութիւնով կատարում է. նա է ճշմարիտ քրիստոնեայ, որի գործը քրիստոնէական ճանապարհի վրա է գնում, և միշտ սրտումը ունի Աստուծոյ երկիւղը։ Քրիստոնեայն՝ որ իրա անձը Քրիստոսի աշակերտ և հետևող է կոչում, զլխաւորապէս կըճանաչուի նրա սուրբ պատուիրանքը և կտակը կատարելով, թէ՝ «Պատուիրան նոր տամ ձեզ, զի սիրիցէք զմիմեանս, որպէս սիրեցի ես զձեզ։ Զի և դուք սիրեսջիք զմիմեանս։ Յայսմ գիտասցեն ամենեքեան, եթէ իմ աշակերտք էք, եթէ սիրիցէք զմիմեանս։» Յօհ. ԺԳ. 34. 35. (1)։

Ուշադրութեամբ կարդա՛ հիմա Ղազոյի գրուածքը և տես, թէ կա՞յ նրա մէջ սիրոյ նշան, կա՞յ քրիստոնէական խղճմտանք, կա՞յ մարդկութեան օրէնք, կա՞յ մէկ քաղաքավարի խօսք, կա՞յ արդեօք Քրիստոսի աւետարանի աշակերտի հետք (իզ). կա՞յ մէկ խնայել — ամենևին չես գտնի, դաբաղ Ղազոյի վրա կարծեմ խըղճմտանքաւոր կըհամարուի, թիֆլիզի սատանի պէս, ճարցի լեկզին, — պատճառ որ լեկզին ազգուհայ խմացող է և սատիկ էլ պահպանում է, իսկ դաբաղը բոլորովին ուրացաւ։ — Մի՞թէ Քրիստոս պատուիրեց, էպ-

(1) Նոր պատուիրան եմ տալիս ձեզ, որ իրարու սիրէք, ինչպէս ես ձեզ սիրեցի, որ դուք էլ իրարու սիրէք։ Այսով կիմանան, թէ իմ աշակերտներ էք, եթէ իրարու կըսիրէք։ Յով. ԺԳ. 35, 35.

պէս անպատուել իրա օծեալներին, իրա փոխանորդ հովիւներին, չըկարդաց նա սուրբ Աւետարանը, թէ «որ ասիցէ ցեղբայր իւր յիմար, պարտաւոր լիցի ատենի, և որ ասիցէ ցեղբայր իւր մորուս, պարտաւոր լիցի գեհեն հրոյն» Մատ. Ե. 22. (1): Եթէ յիմար և գիժ խօսքերը, որ մարդուս սովորական բառերն են, Քրիստոս դատաստանի և դժոխքի է պարտաւորանում, հապա դաբաղ Ղաղօն, որ չըլսուած խայտառակ խօսքեր, օձի թոյն է թափել բոլոր հոգևորականաց վրա, ո՞ր տեղին է պարտաւոր ընում համեմատելով նրա գըրածները Աւետարանի հետ, որ չըկամեցաւ ժառանգել Քրիստոսի տուած երանին, թէ՝ «Երանի խաղաղարաց զի նոքա որդիք Աստուծոյ կոչեսցին» Մատթ. Ե. 9 (2): Օրէնք է քրիստոնեայ մարդուն, որ զուր տեղը, ակի անդուռը բերանով հայհոյել Աստուծոյ քահանայքը և խռովութիւն գցել ժողովրդի և հոգևորականաց մէջ:

Աւետարանի աշակերտը, եթէ բարակ մտքով քննէ Ղաղայի գրուածքը, կըտեսնէ, որ ո՛չ մէկ անարգ խօսք չէ վերաբերում քահանայից. այլ Քրիստոս ասում է «որ ձեզ լսէ, ինձ լսէ և որ զձեզ անարգէ զիս անարգէ, և որ զիս անարգէ, զառաքիչն իմ անարգէ:» Ղուկ. Ժ. 16. (3): Տեսա՞ք հիմա, թէ հոգևորականներին անարգողների ծայրը հասնում է մինչև Աստուած: Գան թէ սուրբ Յակոբի

(1) Ով իրա եղբօրը յիմար կասի, դատաստանին պարտական կըլինի, ով իրա եղբօրը գիժ կասի, դժոխքին պարտական կըլինի. Մատ. Ե. 22.

(2) Երանի խաղաղութիւն գցողներին, որ Աստուծոյ որդիք կասին. Մատ. Ե. 9.

(3) Ով ձեզ կըլսէ, ինձ կլսէ և ով որ ձեզ կանարգէ, ինձ կանարգէ, և ով որ ինձ կանարգէ, ինձ ուղարկողին (Հայր Աստուծուն) կանարգէ. Ղուկ. Ժ. 16.

գիրքն էր կարդում, թող Աստուծոյ և Սաղմոս էր կարդացել, երևի թէ դա ոչ կարդացել է, և ոչ թէ ժամն է գնացել, ապա թէ ոչ էնպէս գրողը, և սուրբ Յակոբի գիրքը միանգամ լսելով մոքումը պահողը, եթէ ժամ գնացող էր էլած, չէ՞որ նկեղեցումը կլսէր Սաղմոսի, Աստուծոյ և Առաքելոց գրածների սատանայութիւնը ընկերին վատաբանելու համար, և էն ժամանակ հեռու կլինեար Աստուծոյ քահանայից բամբասելուց: Տեսէք թէ ի՞նչ է գրում Դաւիթ մարգարէն՝ «Լռեցո՛ զլեզու քո 'ի չարութենէ, և շրթունք քո մի՛ խօսեսցին զնենգութիւն... Երեսք Տեառն 'ի վերայ չարագործաց, սատակել յերկրէ զյիշատակս նոցա» Սաղ. 5. (Լ. գ. 14. 17. (1): Ո՞ր ճշմարիտ աստուածապաշտը չի վախել էս խօսքերից, մանաւանդ որ Աստուծոյ երեսը չարագործ, չարախօս, չար լեզու և բերան ունեցողների վրա է, որոց յիշատակը երկրից պիտի ջնջէ, ուրեմն քահանայք էսպիսի մարդկերանցից ամենևին չընեղանան, պատճառ որ, եթէ իրանց Տէր և Վարդապետ և քահանայապետ Քրիստոսին ասեցին Հրէայքը, թէ՝ «Ահա ուտող ու խմող մարդ, մաքսաւորների և մեղաւորների բարեկամ: Մատ. ԺԱ. 19: Եւ թէ դեւերի մեծաւոր Բէեղզեբուղի հրամանովն է հանում դեւերին: Ղուկ. ԺԱ. 15: Ո՞ւր կլինեն աէրոէրները, և ինչքա՞ն կլրբամբասէ կարդացողը, Աստուծոյ մեղեակ մարդը՝ մեր երիցներուն: Դաբաղ Ղաղօն էլ... մէկն ընի մեզ համար էս մասին:

Մենք վաղ էինք ճանաչում դաբաղ Ղաղոյին և լաւ գիտէինք, ինչպէս որ ինքը իրա բերանով խոստովանում է

(1) Լռեցրո՛ քո լեզուն չարութիւնից եւ շրթունքներդ նենգութիւն չըխօսին: Աստուծոյ երեսը չարագործների վրա է, նը բոնց յիշատակները երկրից ջնջելու համար. Սաղ. Լգ. 14. 17

հրապարակով «ուստա լօթռանգ Ղաղօ»(տե՛ս «Կռունկ եր. 461. տող 30 և 31)։ Բայց սուս էինք կացել, գուցէ իրանց չարութիւնից յետ դառնան, ամմա բանը էնտեղ գցեցին, որ մենք էլ գրիչ վեր առանք, որ նրանց բոլոր ծածուկները յայտնելու։ Էլի չենք զարմանում Ղաղոյի վրա, որովհետև մենք Աւետարանի աշակերտ ենք հաւատում ենք տուրբ գրքին, դիտենք որ մարգարէութիւնքը, որը կատարուած են և կատարվում են, որն էլ կատարվելու են, և յայտնի տեսնում ենք մէկ քանիսը կատարուած։-Յակոբ նահապետը 3347 տարի առաջ մարգարէացաւ երբ իրա տասներկու որդկերանցը օրհնում էր մահուան ժամանակը և հերթը ընկաւ Դան անունով որդուն, ասաց. թէ՝ «Եւ եղիցի Դան օձ ճարանակալ ՝ի ճանապարհի» Ծնն. Իթ. 17. (1)։ Բան ու գործը թողած, քահանայից ետևիցն է էլի մեն գալիս թէ մօթալ ծախողի դուքնի առջևը, թէ եղ առնելու վախտը, թէ գիշերով գինի խմելու վախտը, թէ գիներու ճաշնիկ առնելու վախտը, թէ պատկի տօրգումը, թէ կողոպուրտի յետ ղրկելու վախտը, թէ խոստովանքի վախտը, թէ կնկտերանց քօքօլայ տալուս վախտը, թէ կռիւ գցելիս, թէ ժամ չըգնալիս, մէկ խօսքով ամենայն անկարգութիւն անելիս։ Ուղիղ մարգարէացաւ Դաւիթ, թէ՝ «Ամէ անօրէնն մեղանչել ընդ միտս իւր, չէք երկիւղ Աստուծոյ առաջի աչաց նորա։ Ընդդեցաւ առաջի նորա, գտանել զանօրէնութիւն իւր, և յատել զնա, բանք բերանոյ նորա անօրէնութիւն և նենգութիւն են։ Ոչ կամեցաւ նա իմանալ զբարի, զանօրէնութիւն խորհեցաւ յանկողնի իւրում։ Եկաց նա

(1) Եւ Դան ընի օձ ճարան պահող ճանապարհի վրա. Ծնն. Իթ. 17.

յամենայն ճանապարհ որ ոչ է բարի և՝ ի չարէ նա ոչ ճանձրացաւ։ Սաղ. ԼԵ. 1-5։ (1)

Ասենք, թէ՝ էն խայտառակ յօդուածը գրում էր հոգևորականների վրա, մի՞ թէ նրանց մէջ լաւերը չըկային, մի՞ թէ առ հասարակ էնպէս էին, կարելի՞ է արչեօք մասը վեր առնուլ բոլորի տեղ, և երկու կամ երեքի համար ընդհանուրը խայտառակել։ Ինքը յայտնի խոստովանում է (եր. 454), թէ՝ «Յայտնի է Աստուն ինչ ղըդայ պարտքերու տակն իմ ենգի, օղուշաղս պահելու համար։ Ուրեմն ասենք մենք էլ, թէ բոլոր դասալներու օղուշաղները փուչ են, լոթիք են, շրաաէր են, մոդնի են, և դասալները պարտքի տակ են, էլ ոչով նրանց ոչ նիսխա ապրանք տայ, և ո՛չ թէ փող փոխ տայ, չունքի Ղաղօն կոտր է, պարտք ունէ։—Բայց մեզանից հեռու անէ Աստուած էդ խօսքը, որ Ղաղօն պարտքի տակը տնքալով իրա օղուշաղի շռայլութեան (անդայրաթութեան) պատճառով, համքարը ի՞նչ մեղաւոր է. և մէկ մարդու սաբաբով ի՞նչպէս կարելի է սաղ համքարի էհտիրարը կոտրել. չէ, մենք Ղաղոյի փուչ լեզուն չունինք, որ էդպէս խօսանք ու անարդենք ողջ փեշաքարներին, թէ Ղաղոյի պէս կուլին, մենք գիտենք թուրքի մասալէն, թէ՝ «մէշայ չախակալըզ օլմազ» ա՝ էն տեսակ հասարակութեան մէջ կան լաւն ու վատը, ամմա լաւը շատ է, վատը քիչ։

(1) Աստուած է անօրէն մարդը իրա մաքում մեղանչելիս. չկայ Աստուծոյ երկիւղը նրա աչքի առջեւը։ Ենդութիւն արաւ նրա առջեւը, գտնել իրա անօրէնութիւնը եւ ատել նրան։ Նրա բերանի խօսքերը անօրէնութիւն ու ենդութիւն են։ Զըկամեցաւ նա հասկանալ բարին, անօրէնութիւն մտածեց իրա գողնքումը. կանգնեցաւ նա ամեն ճանապարհի վրա, որ բարի չէ, և չարութիւնից նա չըհանգստացաւ։ Սաղ. ԼԵ. 1—5։

Շատ ծուռը և անաստուած դատողութիւն, անխղճմտանք վճիռ. դժոխային խօսք. սատանի լեզու, սատանայի բերան. իժ օձի բնութիւն կը ընի, որ մի քանի խի տեղ ընդհանուր հասարակութիւնը բիաբուռ, բէսիրաթ անել. էդ կընշանակէ թէ՝ գրողը կամ անողը սրտի մէջ մէկ ծածուկ թոյն (եաղու) ունի, որ առհասարակ ամէնքի վրա թափում է, որ թիֆլիզու վաճառուն և չորս տէրտէրների մէջ ոչովին չըդտուա լաւ, այլ կուրացրուց աչքերը՝ լաւերին չտեսնելու, և խլացրուց ականջները՝ լաւերի անուն չըլսելու: Ամէն բանը թողնենք, էս միայն ասենք, թէ՝ դա ո՞վ է, որ հոգևորականներին դատում է, ո՞վ կարող դրան դատաւոր, դա ումի՞ իշխանն է, դա ո՞ր հոգևորականաց գլուխն է. սիրելի Հայք, դո՛ք դատեցէք, թիֆլիզու եօթն հազար տուն Հայքը, որ մէջ կան երևելի իշխաններ, ազնուականներ, պատուաւոր քաղաքացիք, վաճառականներ, էնտեղ ընկան, որ չտատնդ դաբաղ ղազօն դատաւոր նատեցաւ հոգևորականների:

Մէկ բան միաքս էկաւ, ասեմ, 1838 թուին, չամչի Մէլքոյի կնիկը գնում է Կոնխատորը իրա որդու մէարիկէն ատանալու, էն ժամանակը մէկ Ախալցխեցի գրագիր կար էնտեղ, և ռուսերէն միայն, «զալիթրի» բառը դիտէր և իրա օգտի համար բանը ուշացնում էր, էն կնիկը որ բնզբեցաւ գնալ դալու ց վերջը բդաւելով հարայ տուաւ թէ ձուենը գլխիդ թիֆլիզ, որ եաղլու ուտող կռօն կանցխատորի մեծ է դառի: Հիմա մենք ալիտի ասենք, թէ ձիւենը հոգևորականների գլխին, որ դաբաղը, դատաւոր է դառել: Ջինդանայ չալիր, քիւրդ օյնար, հա թօյ գլը. հա թօյ:

Լօթառանդ ղազօ, դու խօմ աւետարանը միշտ քո տղի հետ մէկ տեղ կարդում էք. ընչո՞ւ չես կատա-

բում նրա միջի գրուածքը, ընչո՞ւ չ'իմացար թէ յայտնի արդելում է նոր կտակարանը մարդուն, ուրիշին դատելու, եթէ քահանայքը վատ էին, ի՞նչպէս է լռել 7000 տուն ժողովուրդը, որ գանդատ չին արել, չէ՞ որ կաթուղիկոս ունին, սինոդ կայ, առաջնորդ կայ, կօնսիստոր կայ, իսկ դու ո՞վ ես, այ տղայ, ի՞նչ մարդ ես, ի՞նչ ձայն ունիս հասարակութեան մէջ, որ քահանայից դատաւոր դառնաս, դեռ քո օղլուշաղին դատէ, խրատէ, ուղղէ, որ քեզ պարտքի մէջ չը խառնեն, յետոյ ուրիշին դատէ, քո աչքի գերանը թողել ես, իրիցներու ծեղն ես տեսնում, այ խելօք օղլուշադդ տունդ քանդում է, էտուր ճարը տես, որ պարտքի տակից ազատվիս և քօխիդ չը ծախիլ տան պարտականութիւնը։ Կատարեալ մարդը կասէ թէ դատաղը խստակ ցնորած է, գրածիդ ոչ գլուխն ես իմացել, ոչ մէջը, ոչ վերջը, չը լնի՞ թէ քո հայրդ որ տէրտէր էր նրա արածներն ես գրում և նրա կեղտը բոլորին ես քսում։ Չէ, չէ, քեզ չեն թողնի դատաւոր դառնաս, բերանդ կը լիակեն՝ Քրիստոսի և Առաքելոց խօսքով, թէ՝ «Մի դատէք, զի մի՛ դատիցիք։ Մատ. Է. 1։ (1) Եւ Պօղոս առաքեալը գրում է Կորնթացւոցը, որ քեզ նման դատաւորներ դուրս եկան ու չ'ընդունեց ասելով «Այսպէս համարեսցին զմեզ մարդիկ, իբրև զպաշտօնեայս Քրիստոսի, և հաղարապետս խորհրդոցն Աստուծոյ։ Այլ ինձ և այս անարգանք են, եթէ 'ի ձէնջ դատեցայց կամ բնաւ իսկ 'ի մարդկանէ, նաև զանձն իմ ոչ քննեմ։ • • Զի որ քնեն զիս, Տէր է։ Այսուհետև մի՛ յառաջ քան զժամանակն դատէք, մինչև եկեսցէ Տէրը, որ լուսաւոր առնիցէ զգաղտնիս խաւարի, և յայտնիցէ զխորհուրդս սրտիցն և ապա իւ-

(1) Մի դատէք (ուրիշին) որ ձեզ էլ չը դատեն։ Մատ. Է. 1։

բարձանչիս ըստ գովութիւն եղեցի յԱստուծոյ։ Իսկ արդ ո՞վ է՝ որ քննիցէ զքեզ։ . . . ինձ այսպէս թուի, եթէ զմեզ զառաքեալս յետնորդս արար Աստուած, իբրև ըզմահապարտս, զի տեսիլ եղեաք աշխարհի, և հրեշտակաց և մարդկան։ Մեք յիմարք վասն Քրիստոսի և դուք իմաստունք 'ի Քրիստոս, մեք տկարք, և դուք հզօրք, դուք փառաւորեալք և մեք անարգք։ Կորն. Դ. 1-10։ Դո՞ւ ո՞վ ես, որ դատես զայլոց ծառայ» Հռովմ. ԺԴ. 4. (1)։ Եւ սուրբ Յակոբոս առաքեալն էլ էսպէս է հրամայում։ «Մի բամբասէք զմիմեանս եղբարք, որ բամբասէ զեղբայր, կամ դատէ զեղբայր իւր, զօրէնսն բամբասէ և զօրէնսն դատէ, և եթէ զօրէնսն դատիցես, ոչ առնող օրինացն ես, այլ դատաւոր։ Մի է օրէնսդիր և դատաւոր, որ կարողն է փրկել և կորուսանել։ Դու ո՞ւմ ես, որ դատես զընկերն։ Յակ. Դ. 11—13 (2)

Լսեցէ՛ր, որ դու չես դատաւոր, եթէ Կորնթոս քաղաքը չըկարողացաւ դատաւոր ընդունել մէկ մարդու, դու

---

(1) Թող մարդիք էսպէս համարեն մեզ, ինչպէս Քրիստոսի պաշտօնեայք, և Աստուծոյ խորհուրդների տնտեսներ։ Բայց ինձ համար էս էլ անպատուութիւն է, եթէ ձեզանից դատվիմ, կամ հէնց բոլոր մարդկանցից, էլ ես իմ անձս չեմ քննում։ Պատճառ որ, ինձ քննողը, Տէրն է։ Այսուհետև ժամանակից առաջ չըդատէք։ մինչև Տէրը գայ, որ խաւարի ծածուկները. յայտնի կանէ, և սրտերի խորհուրդները բաց կանէ, և յետոյ ամեն մէկի գովասանքը կըլինի Աստուծոց։ Հապա ո՞վ է, որ քեզ կքննէ... ինձ էնպէս է երևում, թէ Աստուած մեզ առաքեալներիս վերջինը արաւ մահապարտների պէս, որովհետև աշխարհքի, հրեշտակների և մարդկանց տեսարան դարձանք։ Մենք յիմար (էլանք) Քրիստոսի համար, և դուք իմաստունք Քրիստոսումն, մենք տկարներ և դուք զօրաւորներ, դուք փառաւորուածներ և մենք անարգներ։ 1 Կորն. Դ. 1—10։ Դու ո՞վ ես, որ ուրիշի ծառային դատում ես։ Հռոմ. ԺԴ. 4։

(2) Իրարու մի բամբասէք եղբայրնե՛ր, ով որ իրա եղբօրը

ձվ ես, որ ողջ հոգևորականաց դատաւոր և օրէնք դնող ընես։ Զրդիտա՞ս, որ Աստուած քեզ նման դատաւորին և բան դրողին ասում է Դաւիթ մարգարէի բերանով, թէ՝ «Բերան քո յաճախէր զչարութիւն, և լեզու քո նիւթէր զնենգութիւն։ Նստեալ զերեքօր քումմէ չարախօսէիր։ ։ ։ Զայս ամենայն արարեր։ և լռեցի քեզ, կարծեցեր անօրէնդ՝ի մտի քում, թէ և ես քեզ նմանիցիմ։ Արդ յանդիմանեցից և կացուցից զայս ամենայն առաջի քոյ։» Սաղ։ խթ։ 19 20։21։ (2)

Բայց մէկ բան եմ ուզում ասել, քանի որ նրա գրածի պատասխանը չեմ տուել։ որ Ղ.աղօն ինչպէս ինքն ասում է, թէ օղլուշալի խաթեր պարտքի տակն է ընկել, երևում է թէ՝ դա էլ դուքան չունէ, պարապում մանր է դալի, քիլիխ ուտողի համքարումն է, թուրքի մէջ յդանումը կանդնած է, չունքի մեռելները էն կողմն են տանում, որ յետ գալիս խալխի հետ գնայ։ քիլիխ ուտէ, լօթը (փորը) լէցնէ գինով, երանի՞ էնպիսի մարդոյ աչքին, որ կնիկը ծամօտասխամով ու խաբարդով (կրինօլին) (թիկնոց) ընի մանր գալի ու մարդը քիլիխ ուտելով։ Մէկ էլ երևում է որ դա տնէ տուն թաղուն մանր է էլի գալի ողորմութիւն հաւաքելու, որ կողուպուրտի հէռատը գիտէ, մէկ էլ որ կամ դա տէր-

---

բամբասում է կամ նրա եղբօրը դատում է, օրէնքն է բամբասում և օրէնքն է դատում, և եթէ օրէնքը կըդատես, էն ժամանակ՝ ոչ թէ օրէնքի կատարող ես, այլ դատաւոր ես։ Օրէնք դնողն ու դատաւորը մէկն է, որ կարող է փրկել ու կորցնել, Դու ո՞վ ես, որ ընկերիդ դատում ես։ Յակ։ Դ։ 11—13։

(2) Քո բերանդ չարութիւն էր շատացնում, և քո լեզուդ չարութիւն էր հնարում։ Քո եղբօր վրա նստած չար էիր խօսում էս ամէնը արիր և ոչինչ չասի քեզ, կարծեցիր անօրէնդ քո մտքումդ, թէ ես էլ քեզ նման եմ։ Հիմա էս ամենը կըխփեմ երեսիդ և կըդնեմ քո առջևը։ Սաղ։ խթ։ 19։ 20։ 21։

2127.

տէրունների տանը գիշերով էլ քնել է, ու տեսել է նրանց գլխաքը դրած չարեքանոցը գինով լիքը ջրի տեղ խըմելու, թէ որ չէ, առուտուրի տէր մարդը, չէր կարող դրել էնդունք, ինչ Ղազօն դրել է, մինչև որ պարապ, անդործ մանեկող չըլլի։ Կարդացողը քննէ, թէ գործ ունեցող մարդու գրած է՞. դրուստ անդամալուծի պատմութիւնն է որ Աւետարանումը չըկայ, ուՂազոյի պէս մէկ ցնորուած մարդ խելքին գօռ տալով դրել է, թէ պատմաբաններու շարքումը կանդնի։ Բանը երկարեց, սկսենք մեր պատասխանը էս վերնագրով՝

ՀՆԳԷ. ԻՆՉ ՍԵՐՄԱՆԵԼԵՍ.

Եր. 462. տող 4. գրում է՝ «Սխալ տէրտէրը էնէնց պիտի անէ՞ . . . վուր թէ իր ժողովրթի տանը մեռել կու պատահի ան փսակ ու ան կնքվատնք ըլի, մէկ էլ Զրօրհնէքին ու Զատկին կիհա նրանց տուն, էս է. . . ուրիշ վախտ դահանէքը իրանց ժողովրթի գըռնօքն էլ չին անց կենում»։

Ահա անմիտ խօսակցութիւն, բանական մարդը էս կ՚ասէ՞, թէ քահանայքը մինչի օրէնք չէ պատահում և անօրհնէք, էլ ժողովուրդի դռնօքը չին անց կենում։ Ամէնքին յայտնի է, որ Թիֆլիզու քահանայքը հարիւր տանից քիչ աւել կամ պակաս ծուխ ունին, և էս հաշուով տարին երեք անգամ է հերթը գալի ժողովրդեան տուն դնալը։ Զրօրհնէքին և Զատկին, որ անխափան գնում են, նոյնպէս օրէնք կատարելու, հիւանդին սրբութիւն տալու, եթէ մէկ նեղութիւն ունենում են, շուտով քահանային են կանչում, եթէ քա-

հանոյն իմանում է. թէ մէկի տանը անբաւականութիւն կայ, կամ ծնողի և որդւոյ մէջ, կամ մարդ ու կնկայ, կամ եղբայների մէջ՝ շուտով գնում է, չէ թէ միանգամ, այլ տասն անգամ, մինչև որ վէճը խաղաղացնում է. իսկ եթէ քահանայն սաղ օրը մնայ ամեն մէկի տանը, նրա օղուշաղի ֆինքը ո՞վ քաշէ. և եթէ միւս ժողովրդներին յանկարծ հարկաւոր գործ պատահի թէ սրբութիւն տալ, թէ յանկարծամահի մկրտութիւն, և թէ ուրիշ տնական կարիք, տէրտէրը որ իրա տանը չընի, ո՞ր տեղ գտնեն, ի՞նչ գիտեն թէ ո՞րի տանն է, նա մանաւանդ, շատերը պաշտօնների մէջ են ոմանք անգամ են, ոմանք բարեկարգիչ, ոմանք պատգամաւորներ (դէպուտատներ) նշանակուած զանազան հոգևորական գործքերի համար մարմնաւոր պատարաններում, ոմանք քննիչներ զանազան գործքերի, ոմանք եկեղեցական կալուածների վերակացուք, ոմանք եկեղեցական մլքերի և եկեղեցեաց շինութեանց, ոմանք ուխտատեղեաց վերակացուք, ոմանք ուսուցիչներ զանազան ուսումնարաններում, ոմանք գրագիտութիւնով են պարապում, ոմանք երդմնեցուցիչներ թիֆլիզու բոլոր դատաստանական տեղերում, ոմանք էլ շաբաթական հերթականներ են, չեմ ասում իրանց տնական գործքերը՝ որ դաբաղի սրտին նեղութիւն չընի: Սակայն, ժողովրդեան բացի հովուելուց. միւս հարկաւորութեանցն էլ հասնում են: Ողջ համքարին յայտնի է, թէ տարէնը քանի՞ անգամ քահանայքը Ղազոյի պէս քեռաքը մարդկերանց համար ժողովք են անում դուքն է դուքան: Զէ՞ ամաչում ինքն իրան, հէչ միտք չածա՞ւ էստունք: Շատ լաւ գիտէր, բայց ինչ անես, բընութիւնը, ազգին ճշմարտախօսութիւն չէ տուել, ախր պիտի կատարուի Դաւիթ մարգարէի ասածը, թէ «Զի

ՈՉ զոյ 'ի բերանս նոցա ճշմարտութիւն, և սիրտք նոցա նանրեալք են։ Որպէս գերեզման բաց է կոկորդք նոցա, և լեզուօք իւրեանց նենգաւորք եղեն։» Սաղ. Ե. 10—11։ (1) որովհետև ներքև Ջոկ ստութիւն ունէ վրա բերելու, որ բանը՝ բանին, խօսքը՝ խօսքին համեմատ գոյ, ինչպէս ասում է՝

Եոյն եր. 462. տող 11. «Հաղիր գնան թուրքի մէյդանը կանգնին մօթալ ծախողի դուքնի առջևը, կըզակը դաւազանին դէմ տան, ու փառաւոր միրուքը դրատելով, թամաշայ անին խալխին...ուրիշ ինչ բան ունին.. անթէ չէ, կեհան իրանց ինջարով վինկալած բաղերու հախուհեսաբը կուզին բաղմնչերումն կրուվելով ու հարայ հուրուցով»։

Աշխարհօրէն մասալայ կայ թէ՝ ստի ոտները կարճ է, կատուի փախչելն էլ ընչրու մարաքն է։ Ղազօն երբոր երկուսի կամ երեքի տեղը բոլոր քահանայից վրա գըրեց։ Կարդացողը քնէ և դատէ, եթէ որ թիֆլիզու 64 քահանայքը մօթալ ծախողի դուքնի առջևը կանգնին սաղ օրը (ժամանակ չունէ նշանակած) էլ ի՞նչ առուտուր կուենենայ, չէ թէ մէկ դուքան բանդ կանենայլ ուրիշ երեք էլ։ Ասէ ճշմարիտը, ով Աստուած կը սիրէ, թէ դուքնի տէրը զաբռ՞ել կանէ.—էսպէս էլ սուտ, այ խելօք,—երկուսի կամ երեքի համար կատէր որ գոն է, լսողը հաւատացել էր. չէ թէ բոլորի համար։ Ցեռոյ գրում է թէ՝ «ուրիշ ինչ բան ունին»։—Կարդայ վերևը, թէ ինչ բան ունին, մէկ մէկ գրած է,

---

(1) Պատճառ որ, իրա բերանումը չկայ ճշմարտութիւն, եւ նրանց սրտերը փուչէ։ Ինչպէս գերեզման բաց է նրանց կոկորդը (իբ. Թլաւուգ. զարդանաց) և իրանց լեզուով չարագործ էրան։ Սաղ. Ե. 10, 11։

էլ կրկնելու չենք։ Եւ էնոր դրումէ թէ, ինչարով բաղ ունին վեր կալած — մէկ հարցնին էն խղճմտանքաւորին, թէ՝ բոլորն էլ բաղերի ինչոգարներ են, ընչու ես մահացու եաղուդ թափում ամենքի վրա։ Ս.հա ես ասեմ. հինգ քահանայ իրանց սեփական բաղ ունին. և մէկը հոգևոր կառավարութիւնից վերակացու է կարգուած եկեղեցական բաղի, մէկ երկուսն էլ փող ունին տուած բաղատէրներին, և իրա ժամանակին չըկարենալով ստանալ գումարը, մուլքն են վեր առել — ինչ յանցանք կայ էս ասող, բաս փողինը ձեռք քաշեն, թէ վայրահաս գարաղը կասէ թէ ինչարով բաղ ունին. մի՞թէ մեղք է մուլք ունենալը, ինքը որ կոտրէ, ուրիշի մուլքը փուշէ երևում աչքումը, — թող փշի պէս ծակէ։ Կամ ի՞րբ վրա հասաւ բաղմինչերու հետ կըռվելիս հէսաբի համար, մի՞թէ տուն չունէին, որ հէսաբ էին տեսել.—Էսպէս էլ անխիղճ զբաղարտութիւն որ ինքն իրան յայանի ցոյց է տալի տուութիւնը։ Քրիստոսի Աւետարանն էլ ասումէ՝ «Սուտը իրա հօրինը, սատանայ է, ուրեմն՝ էլ մեղ երկարացնելու բան չըկայ, միայն ասելմանի բանը կ'ասեմ, թէ «Շուրջ եղև զինև շունք բազումք և ժողովք չարաց պաշարեցին զիս։ Սաղ. ԻԱ. 17. (1)։

Եր. 463. տող 17. դրումէ «մէկ էլ կու տեհնիս ձէն կուտան միր փոտաւոր գահանէքը մէյդանումը։ Տօ իզօ...լաւ իզի տիղ չիս զիղի՞։

Օ՛հ. ինչ անարգանք է էֆ. մի՞թէ մեղք է հարցնելը թէ ո՞ր տեղ կայ լաւ եղ կամ պանիր, կամ տրիշ ուտելեղէնք, էս բանը, ո՞չ թէ քահանայքն են հարցնում, այլ ամենայն մարդ, էտուրից իմացէք Ղ.տրէյի տուրը լինումն։

(1) Իմ չորս բոլորքը շները բռնեցին և չար մարդկանց ժողովը պատեց ինձ։ Սաղ. ԻԱ. 17.

Այն եր. տող 20, «Սաքօ, մէկ էլ տեհնիս, ուփ-
րօ բացը ձէնով գոռում են, ասի . . . լաւ գինու տիղ
չիս գիտի . . . ինչանուց գինի տէրտէր Ջան, ասում
է Սաքն։ — Լաւ գլուխ գինի ըլի, խօմ դինդիս իմ
խառնաթը . ինչկէլ թունդին հինդ վէց աբաստանուց
չըլի, բօղաղում չի դեվեր գնայ. . . իրիք չորս աբա-
ստանուց գինին խօմ դիշերները ջրի մաղեար չարիքով
գլխօքս ունիմ դրած . . . . :

Էս բանի համար միտքս է դալիս Սաղ-
մոսը. թէ՝ «Ինչու է պարծենում չարութեամբ հրա-
զօրը անօրէնութեամբ, ամէն օր անօրէնութիւն միտք
ածեց իրա լեզուի մէջ։ Ինչպէս սուր ածելի, սրեց
նենգութիւնը, չարութիւնը սիրեց քանս բարութիւն,
անօրէնութիւնը սիրեց քան արդար խօսքերը։ Սիրեց
նա կործանման ամէն խօսքերը և նենգաւոր լեզուները։
Սաղ. ԾԱ. 1, 2, 3։ Տեսէք թէ՝ ինչպէս սաղ է դալի
մարդարէի ասածը Դաղոյի վրա։—Էս տեղ գրում է թէ
Սաքոյին է հարցնում լաւ գինու տեղը։ Իսկ եր. 467,
տող 10. թէ «էնէնց ռումբլուն բաց ըլի միր քախ-
կումը, վուր առաջ ճաշնիկը իա չտեհնիմ»։ — Էլ ինձ
պատասխան տալու բան չկայ, կարդացողը դատէ, թէ
ինչ անիծած լեզուի տէր է, որ իր գրածը չէ հաս-
կանում։ Հիմա չասենք թէ՝ լաւ մարդ, եթէ քա-
ղաքումը ոչինչ ռումբի չէ բաց ընում, որ տէրտէ-
րը չտեսնէ և թէ «Կիկոլի տղի դուքանումն կու բերիլ
տէիք, իմ մաղեար կօսէիք կուտեհնէիք, թէ ինչ գի-
նի կուտէր նա ձիզ»։ Էլ ինչ հարկաւոր էր Սաքոյին
հարցնելը թէ լաւ գինու տեղ չիս գիտի, երբ որքաա-
ղաք մտած բոլոր գինու ճաշնիկը տէրտէրն է տեսնում,
և Կիկոլու տղէն էլ նրա շերաչին է։ Սրան էլ պատաս-
խան չունիմ, որովհետև ամենքդ տեսնում էք գրողի

չարութիւնը, թէ ինչ մտքով է գրել, որ ժողովրդի ու քահանայից մէջ շփոթ գցէ, ըստ որում քահանայ չճանաչողը, Աստուած չէ ճանաչում։ Միւս խօսքն էլ հասարակութիւնը դատէ, թէ քրիստոնեայ մարդը, մինչև էն աստուածն կուրանայ իրա Աստուածը՝ որ էնպիսի սուտ գրէ, թէ՝ «իրիք չուրա ապատանուց գինին խօմ գիշերները ջրի մազիար չարեքով գլխոքս ունիմ դրած»։ Էս ասելու խօսք է։»

Այն եր. տող 34. և 464 տող 1. թէ՝ «համարցակ, համարցակ, թէ մարդ ու թէ կնիկ, ձլիւ էտ մէ էրեսատեղն ունէինք, գնում էինք դահանիրու մօդ ու միր միսկն ու վարցկը ասում էինք նրանց, հիմի էս էլ չինք կանացի։ Մարթ դահանի մօդ էլ, վուր չըկանեանայ համարցակ ըլի, ու ուրիշ թահար բաներու ահ ունենայ նրանցմէն, էլ ի՞նչ պիտի անէ, խալխը միթամ ուզում է միսկերնումէն թափէ իր գլուխը էն կի չէ վուր, ուիրօ ուարես ականաթնէ ննգնում»

Յայտնի ասէ, թէ ի՞նչ բաներու ահ ունին քահանայից մէն, թող վկայեն թիֆլիզու ողջ Հայերը թէ մարդ թէ կնիկ, թէ խոստովանութեան ժամանակը, բայի խրատից և քարոզից ի՞նչ վատ բան ունին լսած քահանայից մէն։ Էնպիսի քահանային, իրանք կ'ոչնչացնեն, եթէ հաստատուի, մէկ էդ տեսակ աստուածընդդէմ անց.քս—Բայց չէ—ոչ լսուել է, և ոչ էլ կըպատահի միմիայն այնքան գիտենք որ լօթռանդութեան գլխաւոր ճանապարհը խոստովանանքի վերացնելն է։ Դաւիթ մարգարէն վաղ ասաւ, թէ՝ «Դարձցին ընդ երեկոյս, սովեսցին որպէս շուն, և շրջեսցին գ.քաղաքաւ։ Նոքա ղօղանջեսցին բերանօք իւրեանց և սուր է 'ի շըր-

թաւնա նոյա. Սաղ. ԾԸ. 7. 8: (1)

Նոյն երգ. տող 9. «Ամա արի տիա, վուր էս թաւ-ուրնիրը դեղին խաչիրը շինքին գցած, սէյրին անում քաղկի լաւ լաւ տեղիրումը»:

Զարմանալի խնլօք մարդ է էլած, երանի թէ դրա մայրը տատանելիւմն էր ծնի, որ ատաքելոց պէս աշխարհքի լուսաւորիչներ էին գուրս նկել և խնլք դընող ու տրվեցնող: Ա՛յ գաբաղ, ախր էդպէս բանի վրա խօսիլը քո՞ բանն է. էս էլ կաշիրու լէշ քիրվին է՞ ու աշ դնիլը: Ա՛յ խնլօք, մէկ միտք ածա՛, թէ խաչիր տրուողն ո՞վ է, և ումի՞ խնդրքով: Հիմի դուն քո մըտքով ասումես թէ էն պարզևին անարժաններ են: Տօ խնլօք, դեռ առաջ դնա Կոնխատօրը. կարդա՛ նրանց ցուցակ ծառայութիւնները յիտոյ խօսի: Տո՛ քո աշ դրած խնլքով դու ուզումես ժողովրդին հասկացնես նրանց անարժանութիւնը, չե՞ս գիտի, որ շատերը ժողովրդի բարեմասնորագիր խնդիրքնե՝ ով են ատացել, թէ արժանի չէին, ո՞ւր էին միջնորդում.—ամօ՛թ քեզ, ամօ՛թ: Ցնտոյ ասում է՝ «Սէյրին անում քաղկի լաւ լաւ տեղիրումը»—էս էլ գժի խօսք, վերևը երգ. 462 ասում է թէ թուրքի մէյդանումը, մօթալ ծախօղի դաքնի առջևն են կանդնում, իսկ հիմի, թէ սէյրին անում քաղկի լաւ լաւ տեղիրումը: Էսպիսի յանդուգը գը գրողին, էլ ինչ պատասխան տամ, երբ իր գրածը չէ հասկանում, էլի ինքն է ասում: Էս մէկին էլ թող կարդացողները քննեն, և ասեն, խնլօք Ղազօ:

Երգ. 467, տող 3: «Էս միր մինձ տէրտէրնիրը խօմ

---

(1) «Երեկոյեան ժամանակը յետ կըդառնան, կըսուվին ինչպէս շներ և քաղաքի չորս կողմը պտուտ կըգան, Նրանք կը հաչին իրանց ընրանով, և սուր է նրանց (բերանումը) չրթունքնելումը, Սաղ. ԾԸ. 7, 8.

ուփրօ Ջլիզդան Ծբլէմէն անց կացան, իրանց արարմունքներով։ Վուռնցոր մինձին ասում իրանց էնէնց էլ նրանց վատ արարմունքները մինձի մինձ է։ Քէլէխի վրա ատաքնով գինին հուտ կալնելով ին խմում, ու թէ մէ պըսաի գինին չէ դուր գալի, քինթը վէքաշելով ասում են իրանց նէժնի։ բարակ ձէնով տան տիրուջը—ձիր արիւը գիդենայ, էնէնց ռումբի չի բաց ըլի միր քաղկումը, վուր առաջ ճաշնիկը իս չի տեհնիմ։ Էս ինչ թահար գինի է։։։։ թէ սա Կախէթու գինի ըլի ընչի վրա գուզիս գրաղ գուքամ։։։ կէհէիք օխնաճնիր կիկօլի տղի դուքնեումէն կու բերիլ տէիք, իմ մագիսը կօսէիք, կու տէհնէիք, թէ ինչ գինի կուտէր նա ձիզ։։։ ինչ անիմ։։ էս էլ գինի է։։։ ինչ լազաթիք տէհնում էս գինումը, գինին վուր լիգվին չըլի կպչում, էն գինուն գինի կօսիմ։։։։։։։ գինի խմելու ու քէփ քաշելու են գնում նրրանք մեռելի տուն, թէ սըքաուրներու սիրտը խիթարելու ու ումիկնիր տալու։։։։ Մէկ էլ վուր էդ թահար վախտը իրանք են տօլուբաշի դառնում ու մինձ անում գինի գին իրանց համա սըքաուրներու լաւ լազաթի հարփեցնելը։»

Փառք Աստուծոյ, որ ամեն կարգացող կըհասկանայ ստութիւնը և կըդատապարտէ։ Էդ մարդը կարծեմ որ բոլորովին ցնորուած է։։։գոնէ մէկ էնպիսի ստուտ անց քէր դրել, որ հրապարակաւ չէ ընում, միթէ քէլէխը (հոգւոյ հաց) քնջնումը կամ ծածուկ տեղ կամ գիշերով են տալի կամ երկու, երեք մարդու են ուտեցնում, որ էնպէս ստուտ խօսի։—Հա՛, իմացայ հիմի. որովհետև կան տէրտէրներ որ քէլէխ ուտողներուց, աւելի ումը որ ճանչնում են, թէ վէշակը թողած օղլուշախի ֆինքը չեն քաշում, հէնց էն է քէլէխ ու-

տելու են գնում ու հարբում, նրանց պէտքերին դուրս են անում. երևի թէ, Ղաղոյին էլ դուրս են արի քեռ-լեխատանից, նա էլ ջկրու էդ զուրը կապել է,—բան չկայ, քանի զուր ասին, էնչափ արդար մարդու պատիւը ու փառքը կ'աւելանայ, մի՞թէ ամեն խօսածին ու լսածին առանց քննելու կըհաւատան: Չէ՞ որ քեռ-լեխում եթէ երկու կամ երեք քահանայ են ըլնում, աշխարհականներից երեսուն, քառասուն աւելի, պատահում է, որ հարիւրից էլ է անցնում, նրանց մէջ ըլնում են ազնուականներ, աստիճանաւորներ պատուաւոր քաղաքացիք և փէշաքարներ, թո՛ղ, մէկը երկուսը նրանցից ասեն թէ գինու լաւ ու վատի վրա քահանայքը խօսեցած ըլնին. մի՞թէ մինչև էն աստիճան կորցրին իրանց պատիւը, որ մեռլատիրոջը բապմութեան մէջ խայտառակեն, մի՞թէ իրանց ժողովրդի կարողութիւնը չըգիտեն, կամ ե՞րբ և ո՞ւր պատահեցաւ կամ ումի՞ քէլէխի վրա տօլուբաշի դառան: Թէ ճըշմարտախօս մարդ է, անունով ասէ, քահանայքը գեռ կլիսահաց ուտել վերջի հայը մերն են ասում, որ շուտով սուփրէն շէն անեն, և համարեա թէ շատերը, ովքեր որ Ղաղոյի պէս մարդիք են, տրտնջում են և բամբասում տէրտէրներուն, թէ քաղցած վեր կացրին սուփրից: Ուրեմն ո՞ւր մնաց տօլուբաշութիւնը: Կան տէրտէրներ էլ, որ ամենևին քէլէխի չեն գնալ: Էս սըտութեան դէմ, էլ պատասխան հարկաւոր չէ, որովհետև ողջ հասարակութիւնը թէ հայ և թէ օտար ազգի քրիստոնեայք լաւ գիտեն, որ զուրը է կապում, իր չար խղճը առաջ տանելու, որ մէկ շփոթ գցէ, բայց թո՛ղ լսէ ասատուածային վճիռը, թէ «Սատակէ Տէրը զամենայն շրթունս նենգաւորս և ղեղուս մեծարանս:

Սաղ. ԺԱ. 4։ (1)

Եր. 467 և 468 տող 33 և 1. «Խալխին էնէնցին էրէվում միթամ թէ էն սուրբերեմէնին, ու խուլ ու մունջ տեղերումը կի մինձ կռվներու ու շփոթերու աշխա անօղները նրանքին։ Կռիւը քութահ կօնին . . . խում տէր ողորմէն գցելով կամաց կամաց քաշվում ին դիբա ժամը. . . միթամ վուչինչ խաբարութին չէ էլի . . . ժամը դուս էկած, պրծած է ըլում . . . նրանց ժամը ուվրօվաղ չը դուս էկաւ . . խա ու դուն վուր գիդինք էնդի, ղըշխրու տալով ու հարաց հուրուցով . . .

Կրկին զրաբանութիւն և հակառակախօսութիւն, վերևը էլ խայտառակ խօսք չը մնաց, որ չասաւ քահանայից, և նրանց գործքը ցոյց տուաւ կատարուած հրապարակի մէջ ժողովրդեան առաջը և բոլորովին մերզաւոր շինեց, իսկ էս տեղ, տեսնում ենք Աստուծոյ մէկ աներևոյթ ներգործութիւն, որ դաբաղ Ղազօն իր բերանով խոստովանում է քահանայից պարկեշտութիւնը, ասելով «Խալխին էնէնցին էրէվում, միթամ թէ էն սուրբերեմէն էն» էստով ինքն է հաստատում, որ քահանայքը ժողովրդեան մօտ ցոյց են տալիս իրանց քաղաքավարութիւնը և պարկեշտութիւնը, թէ նստելում ու վերկենալում, որ գայթակղութեան պատճառ չպառնան, ուրեմն էն անարդական գրուածքները բոլորն էլ տեղն ու տեղը սուտ են։ Էս իրա վրա կայութենից յեռոյ էլ ի՞նչ պատասխան տանք. երբ որ քահանայքը խալխին սուրբ են երեւում, — հա՛, մոռացայ ասել. միայն դաբաղ Ղազոյի աչքումը չեն սուրբ, որ էլի չէ հանդարտում վատաբանելուց։

(1) Զնջում է Աստուած ամենայն նեղեալաց բերանները և մեծախօս (զուր խօսող) լեզուները Սաղ. ԺԱ. 4.

Եր՝ 468՝ 479 և 488՝ տող 16։ Սկսում է մեռելներու հաս ու իրաւունքի վրա խօսիլ՝ թէ ջահել նորահարսի կողոպուրտը յետ են ղրկում տէրտէրները, թէ ընչու ծոցի սհաթը ու մախմաւր տալօվը մէջը չէ՝ և յետ ղրկած կողոպուրտը մեռելատէրները տալիս են խեղճ աղջկերանց՝ թէ՝ ընչի նոր պսակած տղամարդու քուլաջէն մէջը չէ՝ թէ մոմերը մէկ աբասանց պիտի՝ քառասուն պատարագի ու ամբիծքից վոր պիտի տան՝ սուրբ սեղանն էլ պէտք է օրհնվի՝ ու մեծ զլուխ շաքարն էլ տէրտէրինն է։ Էստուանց պատճառով մեռելատէրերը ընկնում են պարտքի տակ՝ և քահանայքը չեն խղճում։ և այլն և այլն։

Էս տեղ էլ ծածուկ բան ունի՝ ուզում է տէրտէրների արդիւնքը կտրել՝ որ աւելի խռովութեան կրակը վառվի հոգևորների և մարմնաւորների մէջ՝ և ցածը տեղից է բռնում՝ որպէս թէ՝ երբ որ չունէ՝ ինչ պարտական է քահանային տալ՝ և կողոպուրտը ընչու են ուզարկում՝ քահանայի տուն՝ թող աղքատներին տան՝ կամ ննջեցելու համար պատարագ՝ ամբիծք և սուրբ սեղան ինչ հարկաւոր է։

Յայտնի է բոլոր հասարակութեանը թիֆլիզու ննջեցելու վրա ապած շուայլ ծախքերը՝ շատերը չմտիկ տալով իրանց կարողութեանը պարտքով են անում՝

1 Սգաւորը պարտական է ինչպէս իրա և անեցուց համար նոյնպէս մարդու կամ հարսի ազգականին մէկ մէկ ձեռք սև հագցնել։ շատերը քաթիբայ էլ են տալիս։

2։ Ոմանք՝ որք կարողութիւն ունին կամ թէ վաճառական են՝ պօլիօվոյ մուղնիքայ են բերել տալիս՝ տալով 25 մանէթ։

3։ Ոմանք եկեղեցումը բալդախին են սարքել տալիս

և դուրսը մեռելաբարձ կալասկէն, տալով 25 և 30 մանէթ։

4. Գէլէխը ընդունում է երկու տեսակ, նաև ցածր աղգի տներումն էլ, այն է՝ տղամարդկանց համար միայն զանիր, զուրգեալ և խաշլամայ, իսկ կնիկներանց համար մինչի հինգ տեսակ, տեսել ենք մինչի տասն-երկու տեսակ կերակուր։

5. Երկար ժամանակ սուգ կըպահեն կանայք, սըգաւորը պիտի նստի գետնին, և իրանց դրած կանոնով կերթան կանայքը երկուշաբթի, չորեքշաբթի և ուրբաթ երեկոյեանները սգաւորին տեսութիւն. բաւական սգալուց յետոյ կըխմեն չայ և կերթան իրանց տները։ Ենպէտներն էլ կան, որ սաղ տարին տանից դուրս չեն գայ, ոչ եկեղեցի կերթան և ոչ կըհաղորդուին։

6. Ընջեցեալին կըհագցնեն շորեր, թէ հարուստ ընի և թէ աղքատ, և դագաղը (կուբօն) կըզարդարեն, որ պակասը 20 մ. կընստի (1)

Էս շռայլութեանց և աւելորդ ծախսերի համար ծխատէր քահանայքը լաւ գիտենալով իրանց ժողովրդեան կարողութիւնը միշտ խրատել են և յորդորել հեռու կենալ էդպիսի տնաքանդութիւնից, մինչև անգամ էդ պատճառով մեծ անբաւականութիւն է ծագել, որ տանու տէրտէրին փոխել են, թէ դու ի՞նչ գործ ունիս մեր քխայի հետ։

Կան մարդիկ, որ չմոռնիկ տալով իրանց կարողութեանը, կանեն զուր տեղը էն աւելորդ ծախսերը, երբ որ բանը կըգայ ենջեցելոյ հոգուց համար, այսինքն. քահանայից հաստ իրաւունքը տալու, էն ժամանակ կը

(1) Էս բանի վրա գրած մանրամասն հանգամանքը տես Մեղու Հայաստանի 1861 թուի 17 համարումը։

ակին աղքատանալ մեծածախ քէլէխի համար, սե-
ւերու համար, բալդախինի ու կալասկի համար, մու-
զնքայի համար վոր կայ, իսկ ննջեցելոյ հոգւոյ քը-
րիստոնէական պարտքը կատարելու համար վոր չըկայ։
Եվ յիշած բաները ի՞նչ օգուտ են ննջեցելու հոգուն։
Չէ՞ որ նրա հոգուն փրկութիւն տուողն սուրբ պատա-
րագն է, ասենք թէ դարաղը չէ ընդունում. եթէ
իրանց ննջեցելուն սիրումեն, ընչո՞ւ չեն առաջ նորա
հոգու փիքը քաշում։ Մեռելներին կըհագցնեն, որն
որ լաւ շորերն է և կըդնեն ունայն տեղը հողի մէջ,
կարծումեն թէ էն շորերով կերթայ արքայութիւն, և
պատճառ են դառնում իրանց մեռելներին խայտառա-
կելու, որ շատերին պերեզմաններից հանել են շորերը
կողոպտել. իսկ տէրտէրների համար հաւաքումեն հին
շորերը և ղրկում. շատ իրաւունքով է յետ ղրկել տէր-
տէրը (եթէ որ ղրկել է) կողոպուրտը, եթէ չունևոր
էր, թող իր մեռելին շոր չէր հագցրել, իսկ եթէ ու-
նէր, տէրտէրի արդիւնքը ընչո՞ւ է կըտրում. բայց ես
կուզեմ իմանալ, թէ Ղազոյի մօր կողոպո՞ւրտն է յետ
ղրկել էրէցը և ծոցի սհաթը ու մախմուր սալօին ու
զել, չունքի էս տարի մեռաւ նրա մայրը, և կարծեմ
թէ՝ էնդուր է գրում։

Մեր թիֆլիզու իրլցներու համար կարող եմ բաւ-
ական ձէնով ասել, ըստ որում ամէնքն էլ գիտեն, որ ժո-
ղովրդին երբէք նեղութիւն տուող չեն, մանաւանդ,
ովքեր որ իրանց կարողութեան գեօրայ իրանց ծախ-
սի չափ ու ձևն ունին, էն էլ չի կարելի ասել, որ երկու
կամ երեք չըպտնուին ժողովրդին նեղացնողներ և մի
քանիսի պատճառով չէ կարելի բոլոր հոգևորականու-
թիւնը, Ղազոյի պէս, խայտառակել։—Վարդը առանց
փշի չէ, բայց իր գինը չէ կորցնում։—Շատերը գի-
տեն, որ քահանայքը չմտիկ տալով իրանց աղքա-

տութեանը, ունին երևելի բարեգործութիւններ, քանի՞ օտարական աղքատ ննջեցեալներ են թաղել ձրի,— համբարձնելին յայտնի է, քանի՞ աղքատ տներ իրանց ժողովրդից՝ օրհնում են, օրէնքները կատարում են ձրի և իրանց քիսից էլ փող են տալի, քանըսի՞ համար ծածուկ ողորմութիւն են հաւաքել, քանի՞ աղքատ աղջկերք ծածուկ մարդու են տուել, և էսօր էլ անում են. ուրեմն ունևորը պարտական է քահանայից շահել ինչպէս հարկն է, որ նրանք էլ կառավարուին: Ա՛յ եղբայր, աղքատները բան չըտան, ունևորն էլ տակուցը կարէ արդիւնքը, էլ ինչո՞վ պահեն տէրտէրները իրանց օղլուշաղը, երբ շատերը քրիստով անէրու

են կենում: Դաբաղ Ղազօն ուզում է, որ մուֆթայ տէրտէրութիւն անեն. թող ռոճիկ նշանակեն, էն ժամանակը էլ բան չըտան, ապա թէ ո՛չ, էն ո՞ր անխելքն է, որ իր հացը ուտէ, ու իր շորը հագնէ. քեզ ձրի ծառայէ, մի՞ թէ տէրտէրը որ է, քո ծորան է. տօ խելօք, մէկի տանը որ հարինք է ընում կամ ծաղիկ կամ ուրիշ փոխադրական ցաւ, բարեկամները խօմ ամենևին չեն անց կենում դռնօքը, տանըցիքն էլ խիզան են գընում դուրս և պահնորդ են բռնում; յանկարծ կանչում են տէրտէրին, գնում է խեղճը, կանչող մարդը դռնից է փախչում; իսկ տէրտէրը ներս է մտնում, մէկ սհաթ խօսում է, մխիթարում է, սիրտ է տալի, խոստովանեցնում է և հաղորդում, եթէ կտակ ունէ, էն էլ գրում է, և եթէ պատահում է մահ, հէչ մի՞տքն են բերում տէրտէրի լաւութիւնը,- կարելի է թերատ խելքի կարդացողն ասէ, թէ՝ վա՞յ, քահանայ է, իր պարտքն էլ պիտի գնայ,-նրա պէսին կասեմ թէ, լաւ մարդ, դու է տէրտէրի պէս մէկ մարդ ես, ընչո՞ւ դու չես մօտ գնում, — և երբ տէրտէրի պարտքն է՞, դու էլ քո պարտքն

ճանաչեմ, ու տէրտէրին շահես, էն փոխադրական ցաւով քանի՞ տէրտէր կըլնի հիւանդացած ու մեռած, կամ նրա օղլշաղի մէջ ընկած էն ցաւը։ Երանի՞ է քեզ Ղազօ, ոչ մտածմունք ունիս, ոչ փող ունիս, ո՛չ դարդ ունիս, էնդուր ես էդպէս գրում։

Կան էնպիսի մարդիք էլ, որ հարսանիքի ժամանակը մեծ ծախս են անում, որը սազանդրին տան կամ տան և հինգ թուման փող է տալի, որը զուռնաչի ունէ տան և հինգ կամ քսան մանէթ և աւելի, նոյնպէս պօվարներ (աշէրք) և լակէյներ են բերում փողով, էնպէս տներումը, որ իրանց օրումը նրանց տունը պօվար ու լակէյ չէ տեսած, և ո՛չ թէ ծառայ են պահում։ Բայց ոչ սազանդարն է պատկի խորհուրդ կատարող և ոչ զուռնաչին, էնչափ ծախսը արել է, այնումը չէ, երբ որ գալիս է տէրտէրին տալը, նոր է սկսում դայրաթը։ Եւ սուտ է ասում թէ եկեղեցումը տօրդ են անում, կարելի է առաջ պատահած ընի կամ նրա հայրը արած ընի, սակայն հիմայ չեմ տեսի և չեմ իմացի։

Բացի սրանից, քանի՞ քանի՞ նիսիէք կան, թէ տընօրհնէքի, թէ պսակի և թէ ննջեցելու, ահա ձեզ մէկը պատմեմ. մենք Ղազօյի պէս մէկի կամ երկուսի պատճառով ողջին չենք անարգել։ 1838 թուին մէկ ննջեցեալ Թաղեց վանքի եկեղեցոյ տէր Մարկոսը և տէր Յովհաննէս տէր Պետրոսեանցը, որ Ջկրաշէնու եկեղեցու միաբան քահանայ է, և էն ժամանակ տիրացու էր, ժողովք արաւ և էնպէս թաղեցին։ Հիմա հարցրէք ննջեցելոյ տիրոջը՝ թէ դաբաղ Ղազօյի մահլահաթը, որ էնչափ դուր էկաւ քեզ, էն տէրտէրը քո հօր կողոպուրը յետ ղրկեց, թէ քուլաջէն էլ ղրկէ, կամ մինչև հիմա բան տուած կա՞յ, կամ ուզող

էլ՞ել է։ Կարելի է էն ժամանակը կարողութիւն չունէր, հիմի խօսունէ, ընչի՞ չէ տալի, տեսնում էք տէրտէրների մարդութիւնը, նա՝ որ էս բարերարութիւնը ըստացել էր քահանայից մէն,—ընչո՞ւ պիտի հաւանի էնպէս գրուածքին։

Ղաղոյի էնչափ խօսելը քահանայից արդիւնքը կըտրելու համար է. բայց թող կարդայ առաքելական գիրքը լաւ մտառութեամբ և կըտեսնէ գրած թէ՝ «Ո՞ՉՔ զինուորեցի իւրովք թոշակօք, ո՞ՉՔ անկիցէ զայդ, և 'ի պաղոյ նորա ոչ ուտիցէ։ Միթէ ըստ մարդկութեա՞ն խօսիցիմ զայս, կամ թէ և օրէնքն զսոյն ոչ ասիցեն։ 'Ի Մովսէսի իսկ յօրէնսն գրեալ է, ա՛չ կապեսցես զցուլ եզին կալուսոյ, միթէ զեզանց ինչ փոյթ էր Աստուծոյ։ Ո՞չ ապաքէն վասն մեր ասէ, քանզի վասն մեր գրեցաւ, զի յուսով պարտի, որ սերմանէն, սերմանել, և որ կաւուն, յուսով վայելել։ Եթէ մեք 'ի ձեզ զհոգևորն սերմանեցաք, մեծ ի՞նչ է, էթէ 'ի ձէնջ զմարմնաւորսդ հնձիցեմք։ Եթէ այլք ձերով իշխանութեամբդ վայելեն, ընդէ՞ր ոչ առաւել և մեք, այլ ոչ 'ի զործ ինչ արիւք զիշխանութիւնս զայս, բայց ամենայնի համբերեմք, զի մի՝ խափանիչք լինիցիմք Աւետարանին Քրիստոսի։ Ո՞չ գիտէք, եթէ որք 'ի տաճարին զործեն, 'ի տաճարէ անտի ուտեն, և որք սեղանոյն պաշտօնեայքն են, 'ի սեղանոյ անտի վայելեն։ Նոյնպէս և Տէր հրաման եհա, որոց զԱւետարանն աւետարանեն, յԱւետարանէն անտի կեաց։ 1 Կորնթ. թ. 7—14։ Քանզի որ սերմանէ ճշդելով, ճշդելով և հընձեցէ, և որ սերմանէ առատութեամբ, առատութեամբ և հնձեցէ։ Խրատանչիւր որպէս և յօժարիցի ոք սրտիւ, մի՝ առ հարկի և տրտմութեան. քանզի զտուրս

զուարթս առատս սիրէ Աստուած։ 2 Կորնթ. Թ. 6 և 7 (1)։

Յամենեսեան տուրս քո զուարթացո՛ զերեսս քո և ցնծութեամբ սրբեա՛ զտասանորդս։ Քանզի Տէր հաստատեցանող է, եօթնիցս և եթ հաստատէ քեզ։ Մի՞ մատուցաներ զնուէրս թիւրս, զի ո՛չ ընկալցի զնոսա։ Սիրաք. ԼԵ. 11. 13. 14։ (2)

---

(1) Էն ո՞վ կըդառնայ զինուոր իրա ծախսով, ո՞վ է, որ այգի տնկէ, և նրա պտղիցը չուտէ, էն ո՞վ կըլնի. որ սուրուն արածացն է, և կաթնիցը չուտէ։ Միթէ էս բանը մարդկութեան գեօրայ եմ խօսում, կամ թէ օրէնքն էլ էս չէ ասում։ Հէնց Մովսիսի օրէնքումն է գրուած, թէ կալի մէջ աշխատող եզնի դունչը մի կապի, միթէ Աստուած եզներու համար էր հոգս անում։ Չէ՞ որ մեզ համար է ասում. պատճառ որ մեզ համար գրուեցաւ, նա, որ ցանում է, պիտի յուսով ցանէ, և նա, որ կալսում է, յուսով վայելել։ Եթէ մենք ձեր մէջ հոգևորը սերմանեցինք, մեծ բան է, որ ձեզանից մարմնաւորը հնձենք։ Եթէ ուրիշները ձեր իշխանութիւնով կըվայելեն, ընչու մենք աւելի չէ, բայց էս իշխանութիւնը չբանայցինք, այլ ամեն բանի համբերում ենք, որ Քրիստոսի սուրբ Աւետարանի խափանող չըլնենք։ Չէ՞ք գիտի թէ, ով որ տաճարում են գործում, էն տաճարիցն են ուտում, և ովքեր որ սեղանի ծառայողներն են, էն սեղանիցն են ուտում։ Էնպէս էլ Տէրը հրաման տուաւ, ովքեր որ Աւետարանը քարոզում են, էն Աւետարանիցը ապրին։ 1 Կորնթ. Թ. 7—14։ Պատճառ որ, ով խնայելով է ցանում, խնայելով էլ կհնձէ, և ո՞վ առատ է ցանում, առատ էլ կհնձէ։ Ամէն մէկը ինչպէս որ սրտով կյօժարուի, ոչ ակամայ և սրտմտութեամբ. որովհետև Աստուած սիրումէ զուարթ և առատ տուրքը։ 2 Կորնթ. Թ. 6 7։

(2) Քո ամենայն տուրքի մէջ զուարթացո՛ երեսդ, և ուրախութեամբ նուիրէ՛ քո տասանորդները։, Պատճառ, որ Տէրը հաստատեցանող է, մի անգամին եօթնապատիկ կհաստատեցանէ քեզ։ Ցուռը նուէրքներ մի մատուցանի, որ չի ընկալնի։ Սիր. ԼԵ. 11. 13. 14։

Մինչև ցայսօր ժամանակի, և քաղցեցաք, և ծարաւեցաք, և մերկ գնացաք, և կռփահարեցաք, և անհանգիստ եղաք, և աշխատեցաք ձեռովք մերովք։ Բամբասէին զմեզ՝ օրհնէաք, հալածէին՝ յանձն առնուաք։ Հայհոյէին, աղաչէաք. իբրև առակ նշաւակի եղեաք ամենայն աշխարհի, ամենեցուն փարելի մինչև ցայժմ։ 1 Կորնթ. Դ. 11, 12, 13։ (1)

Եր. 470, տող 12։ «Մինձ տէրտէր կի ին ու. ինչ գուզես անի . . . էրնէկ գիպենամ, օվ է տալի գըրանց էտ մինձ տէրտէրութինը. . . .»

Տեսէք, թէ ինչ բոլոր է ուտում, հիմի կաթուղիկոսներին ու առաջնորդներին ձեռք առաւ։ Ո՞վ է աւագերիցութիւն տուօղը, եթէ ոչ կաթուղիկոսը կամ տեղական առաջնորդը։ Չ՝ասացի՞ վերևը, թէ՝ «Ասաց անղգաստն 'ի սրտի իւրում, թէ ոչ գոյ Աստուած»— կարող էր գրի, թէ անարժանին աւագերիցութիւն չպիտի տան, և ոչ թէ, «օվ է տալի գրանց էտ մինձ տէրտէրութիւնը» լաւ գիտես տուողին, բայց կարելի է որ սրտիդ ցաւ է գիպի. էն տէրտէրին, որ քո հօր շար լեզուով քշեցին ուրիշ եկեղեցի, և հերուայ տարին ժողովրդի խնդրանքով Վեհափառ Կաթուղիկոսը աւագ քահանայ կարգեց իր առաջուայ եկեղեցումը։—Պարոն Ղազօ, հիմա դու էլ զարմանում ես, թէ սրտիդ թոյնը ում վրա, որ ուզում ես թափի, շատ հասկացվում է։

---

(1) Մինչի էս ժամանակը քաղցեցանք էլ, ծարուեցանք էլ, ամլոր էլ ման եկանք, գլիներուս էլ խփեցին, անհանգիստ էլ էլանք, և մեր ձեռքով աշխատեցինք։ Բամբասում էին մեզ, օրհնում էինք, հալածում էին՝ յանձնառու էինք ըլնում։ Հայհոյում էին՝ աղաչում էինք, ինչպէս խայտառակութեան օրինակ էլանք ամենայն աշխարհքին, ամենքին ջնջոց լինելով մինչև հիմայ։ 1 Կորնթ. Դ. 11, 12, 13.

Եր. 477. տող 37 և 478 տող 3։ Նախանձը պառիլ է նրանց թաքաուրը...Մխաբանք ինք, կոսէ, ասումն մեր գահանէքը, ու մէկ մէկու արունը ճանգին կուխամն...էնէնց էգեղեցի չկայ, վուր գահանէքը սէրով ըլին...էղեղեցումը պատարագիչը սըքըսաված դուս է գալի խորանէմէն խալխի առջիվը մեղա ասելու, էրկու իրիք էլի ուրիշ գահանէք կան էնդի, վիր ին կէնում նրանք. զիսի մէտի զուսին գնում ժամէմէն ու արձակում չին ասում նրան. եր. 485, տող 6։ Մէ լաւ գիշնաուր գահանայ, վուր ննդնում է մեր տէրտէրներու ճանգը... վայ նրա մինքը...խատակ նահատակին անում խըխճին...էնղըղայ չարչըրում ին, վուր ան նրան էլ իրանց հանդի օմքին ին շինում, ան թէ չէ ջգրու ճիճանատրաք ին անում.... Ջհհիլ, ջհհիլ սև խուզի տակն ին դնում նրան։

Էս յոդուածի կարդացողը, եթէ քրիստոնէաբար դատէ, կարծեմ թէ բոլոր անձնավ կըտսակայ, կըդողայ և փշաքաղ կըլնի, տեսնելով թէ գրողը, մինչի ո՞ր անխղճմտանքութեան ծայրն է հասնում, մինչև որ Աստուծոյ օծեալներին անուանում է նախանձի ճորտեր, միմեանց անհաշտ թշնամիք, արեանարբու, մարդասպաններ։ Կըգրէ՞ արդեօք հաւատացեալ քրիստոնեայն էս բառերը։—Կարծեմ թէ չի գրի։ Միտս է գալի շարականի մէկ երգը, թէ՝ «Արմատ անիծից կրկին ընձիւղեալ, Մակեդոն հայհոյիչ, դայլ ապականիչ յարձակեալ խողխողէր զքնարիրան 'ի հօտէ գառանց.... Նզովեցին զՄակեդոն զհայհոյիչ լեզուն։

Դաբաղ Ղազօն էս իր գրած բանը ընչո՞ւ բաց չէ գրում. չէ ասում անունով, թէ ո՞ր եկեղեցւոյ քահանայքն են շփոթուած։ Մենք յայտնի ասում ենք որ, ամէնն էլ խաղաղ են և սիրով, եթէ գիտէ, թող ա-

նունով դրէ։ Թէ գիտուն քահանային այնչափ են չարչարուում, որ կամ իրանց նման շինեն, և ընդհակառակը ջահել ջահել սև հոգի տակն են դնում։ — Ահա սուտ, որ քահանայիցը, մարդասպան է անուանում,—ո՞ր գիտուն քահանային ապանեցին,—խաչեցին. ջամահաթ. դուք ասէք. էապէս էլ անխիղճ լուսք, փոխանակ ասելու թէ՝ գիտուն քահանայից պատիւ են տալի, և հարկաւոր գործի մէջ նրանցից են խորհուրդ հարցնում, տեսէք, թէ ինչպէս է եաղուն թափում։ Էս գրածումն էլ մէկ բան կըլնի, առանց էն չէ, մէկ խորհուրդ կայ։—Հա՛, խմացայ, գիտեմ, թէ ինչ տեղ է խօսում, էդ մի քահանայի համար է, որպէս թէ գիտուն էր, և ջահիլ մեռաւ, ես նրան եմ իմանում, եթէ ուրիշ կայ, և ինքը ճշմարիտ մարդ է, մէյ դուրս դայ, և ցոյց տայ, թէ ո՞ր գիտուն քահանային անօր հոգի տակ դրին։

Հիմա պատմեմ ճշմարիտ մէկ անցք, մօտ ժամանակիս էլած։ Օտարական մէկ քահանայ վախճանեցաւ 1847 թուին, որ չորս տարուայ ձեռնադրուած էր, նրան Աստուած պատժեց յայտնի իրա հայրատեցութեան համար, պատճառ որ, նա իր հօրն ու մօրը բերել տուաւ իրանց երկրից և պահում էր իրա տունը։ Հայրը գրաւատ չէր գիտի, «Համբարձին» աչքիցն էլ խասիս էր, և կարգուեցաւ մէկ եկեղեցումը լուսաբար. սրա որդին, օրէնք կատարելու ժամանակը տանում էր իր հօրը, և ինչպէս տիրացու խեղճ ծեր մարդը շուրջառը, աւետարանը, մոշտոցը և բուրվառը կռան տակին բռնած որդուց ետևիցը գնում էր, և որդին իր հօրը, ինչպէս մէկ օտար տիրացու, էնպէս էր ծառայացնում, ժողովրդեան տանը հայի վրա՝ ժամկոչների մօտ էր նստացնում, երբեմն էլ անպատվում

էր, որպէս թէ ինքը քահանայ է և նա տիրացու, յեռ-
ոյ տեսնելով թէ՝ իր ծնողքը չեն կարայի վաստակ
անել և հայրն էլ աչքերի լուսի պակասութեան պատ-
ճառաւ տիրացվութիւնից հրաժարվեցաւ, և ոչինչ չէր
աշխատում, դուրս արաւ հօրն ու մօրը տանից, ճնա-
ցին ողորմելի, և աղքատութիւնով ապրում են էսօր
էլ, ինչպէս յայտնի է ամենքին, որ տիրացուի շոր հա-
գած, ինքը ծեր մարդ, փողոցումը ողորմութիւն է
հաւաքում: Միտք չըբերից էն գիտուն քահանայն
աստուածային օրէնքը, թէ՝ Անիծեալ՝ որ անարգեսցէ
զհայր իւր կամ զմայր իւր: Զ օր. Իէ. 16: Մարդ,
որ հայհոյեսցէ (անարգեսցէ) զհայր իւր կամ զմայր իւր
մահու մեռցի: Ղևտ. Ի. 9: Որ հայհոյէ զհայր կամ
զմայր, շինջցի լոյս նորա. և բիրք աչաց նորա խաւա-
րեսցին: Առ. Ի. 20: Պատուեա զհայր քոյ և զմայր,
զի քեզ բարի լիցի, և զի երկայնակեաց լիցիս 'ի վե-
րայ երկրի: Եկ. Ի. 12. և թէ որ ընտանեաց համար ոչ
տարցի, ուրացեալ է 'ի հաւատոց և չար քան զան-
հաւատն է: (1)

Տեսաք այժմ, ինչ մեղաւոր են քահանայք, երբ
որ մէկը կամ միւսը իր հօրն ու մօրը անպատուէ, տա-
նից դուրս անէ, հաց չըտայ և էնպէս թշուառ ըլ-

(1) Անիծեալ է, ով որ իր հօրը կամ իր մօրը կանարգէ։ 2 օր. Իէ. 16։

Մարդ՝ որ իր հօրը կամ մօրը հայհոյէ մահով մեռնի։ Ղևտ Ի. 9։

Ով որ կանարգէ իր հօրը կամ մօրը նրա լուսը հանգչի, և նրա աչքի պիպիկը խաւարի։ Առ. Ի. 20։

Պատուէ քո հօրն ու մօրը, որ քեզ բարի ըլնի և աշխարհ-քի վրա երկար կեանք ունենաս։ Եկ. Ի. 12։

Ով որ, իրա ընտանիքին վրա խնամք չի ունենայ, նա հա-ւատից ուրացած է, և անհաւատներից էլ փիս է։

նին ապրելիս, քան Աստուած չէր պատժիլ նրան, սուտ էր գրել էն պատուիրանքները: Նա դեռ երկար ապրեց, նա էն օրը պիտի մեռել էր, երբ ծնողացը դուրս արաւ, արժան չըհամարելով իրան՝ նրանց որդի կոչուի, որ ուրիշներն էլ խրատուել էին, էս մի և նոյն պատիժը պահուած է և թռուների համար, որ տեսնելով նրանց ողորմելի վիճակը, չեն տանիլ իրանց մօտ, և ոչ թէ պատահած վախտը լայեղ են անում մանիկ տալ, և նրանք էլ նրանց կենաց օրհնօղն են: Թող հիմայ ցոյց տայ, թէ ո՞ր գիտուն քահանային անօր հոգի մէջ դրին:

Եր. 483. առղ 2: «Միր Հաու շկոլեմէն դուս եկած տղերանցը խօմ ջլիզդան նահատակումին, թէ ինչի՞ տէրտէր չինք դառնում, կօսէ . . . . Ամա քի դըրուստն ասեմ, թակիլութին են անում . . վո՞ւնց խատնըվինք, կօսէ, միր հիմի կուայ գահաներու համքրումը:

Հայոց ուսումնարանի աշակերտներից շատերը քահանայ են դառել, ոմանք տիրացու՝ք են, և ոմանք էլ դեռ էս չեն պսակուած, ու ջահէլներ են, և պատրաստուած են ժամանակին քահանայ դառնալու, բայց հիմա չենք կարծում, որ նրանք տեսնելով կարդացող և աշխատաւոր քահանայքը առհասարակ անպատուած Ղազոյի բերանով ծահանայ դառնան

Եր. 485. «Մեր տէրտէրները . . . տասը հայերէն խօսկ չին կանայ մէ մէկու վրա դրուստ ասի . . . Գըրիլը խօմ Աստուծ պահէ . . . Աղօտկնիրը անգիր տրվելին թուրթի դուշի պէս ու ասում են ժամումը, մէ հարցընիս, թէ ի՞նչ ասիր, տէրտէր ջան մէ յիդ պատմէ էտ աղօտկը:—Վո՞ւնց թէ պատմէ կօսէ նա . . . գուզինք ծըռմըռիլ տայ միր սուրբ աղօտկնիրը՞ . . այ դըրուստ Լ օ թ ռ ա ն գ ու թ ի ն . . . Ախար էս աղօտկ-

նիրը, վուր մեր խօսկերով ասինք, խօմ գիպի մէտի իրան՝ց զօրութինը, կու կորցընին . . . Լօթ ռ ան գ ն ի ր . . . ասկը շուռ տըվօղնիր . . էտ ինչ հարցնելու բան է, վուր հարցընում էք . . . դուզէք խալխն էլ ձիզ պ'ես շուռ գայ . . . ինքը չի գիդի, վունց թարգմընէ, ու օվոր թարգմընէ, կօսէ, լօթռանդ է, ապօսկին իր զօրութինը կու կորցընէ։

Մեր Փրկիչ Քրիստոսը առաջ ասաց, թէ՝ «Դուք 'ի հօրէ սատանայ էք, և ցանկութիւն հօրն ձերոյ կամիք առնել, զի նա մարդասպան էր 'ի սկզբանէ և 'ի ճշմարտութեան ոչ եկաց, զի ոչ գոյ ճշմարտութիւն 'ի նմա, յորժամ խօսիցի սուտ, յիւրոց անտի խօսի, զի սուտ է և հայր նորա» Յովհ. Ը. 44։ (1) Ինչպ'ես Թիֆլիզեցւոց նոյնպէս և օտար քաղաքներից եկած վաճառականներին և արհեստաւորներին յայտնի է 1). որ Թիֆլիզու քահանայից մեծ մասը աւարտել են իրանց ուսումը Ներսիսեան Հայոց Ուսումնարանումը. 2). քահանայից մեծ մասը Հայաստանցիք են, ուրեմն շատ լաւ հայերէն խօսել գիտեն, գուցէ իր անպիտան խանդարուած, ժանգոտած և անհասկանալի Թիֆլիզցու լեզուով չկարենան տասը խօսքը մէկմէկու վրա ասել, ինչպէս գրել է էն յօդուածը։ 3). Քահանայիցմէն ոմանք երեք լեզուով կարդալ ու գրել գիտեն։ 4). Ոմանք քարոզիչներ են. 5). ոմանք իրանցից շարադրողներ և Թարգմանիչներ, 6). ոմանք վարժապետներ Թէ աէրութեան, Թէ ազգային և Թէ մասնաւոր ու-

(1) Դուք հօրիցը սատանայ էք, և ձեր հօր ցանկութիւնը կամենում էք անել, որովհետև նա սկզբից մարդասպան էր, և ճշմարտութեան մէջ չկացաւ, պատճառ որ նրանում ճշմարտութիւն չկայ, երբ որ սուտ խօսի, իրանից է խօսում, ընչու, որ նրա հայրն էլ սուտ է։ Յովհ. Ը. 44։

սուճնարաններրումը։ Էս ամէնը յայտնի հաստատումն է թէ թիֆլիզու քահանայքը իրանց կարդացածը հասկանումեն և ոչ թէ միայն աշխարհաբառ, այլ և օտարի լեզուով էլ կը պատմեն, ինչպէս շատ անգամ պատահել է օտարազգեաց հետ խօսակցութեան մէջ զանազան բաների վրա։ Չեմ կարող չասել, թէ թիֆլիզու 64 քահանայից մէջ մի քանիսը չըլնին տկարներ հասկացողութեան մէջ, բայց դատեն կարդացողները, թէ կարելի՞ է երեք կամ չորսի համար բոլոր քահանայից էնպէս անողխմամանք խայտառակել։ Կարդաց արդեօք Աստուածաշունչ սուրբ Գիրքը, որ թէ տաան արդար գանուել էին Սոդոմ և Գոմոր քաղաքներումը, որոնց մէջ միլիօնաւոր բնակիչներ կային, Աստուած պիտի ազատէր կործանմանից. իսկ նա երեքի կամ չորսի համար բոլոր հոգևորականներին է սպանում ստախօսութեամբ. բայց մարգարէից գրուածքը պիտի կատարուին՝ «Սրեցին զլեզուս իւրեանց որպէս զօձի և թոյնք իժից 'ի ներքոյ շրթանց նոցա»։ Սաղ. ճԼԲ. 3։ (1) Բայց ինչի՞ է շուտ շուտ յիշում լօթռանդ բառը։ Էդ խօսքը ո՞չ թէ մեր քահանայքն են ասել օքմնու, թէ աղօթքը կամ Աւետարանը աշխարհաբառ մեկնելը լօթռանդութիւն է,-ո՛չ, ո՛չ, ամենևին ո՛չ. որովհետև նրանք քարոզը աշխարհաբառ են ասում, ժողովրդին խրատելիս՝ սուրբ Գրքի և Աստուածաբանվարդապետների վկայութիւնքը աշխարհաբառ են ասում, և սակայն դաբաղի մոտքը միայն լօթռանդ բառը յիշելու համար է և մենք խոստանումենք որ թէ առաջուց տպած հին և նոր կտակարանը այսինքն Աստուածաշունչը, կամ այսուհետև եթէ տպվի աշ-

(1) Սրեցին օձի պէս իրանց լեզուներն և իժ օձի եաղուն ներքանց պռօշների տակը։ Սաղմ. ճԼԸ. 3։

խարհաբառ լեզուով Աւետարան կամ Կտակարան գրբրեանք, պարտք կ'համարենք մեզ համար նրանց ուղիղն ու սխալը հրատարակել թէ առանձին գրքով և թէ օրագիրների և լրագիրների ձեռքով, բայց Դաբաղը չը համարձակուի միւսանգամ հոգևորականներին անարգել թէ լօթռանդ են ասում և ոչով չի խաբուիլ, ըստ որում ինքն է ասում՝ եր. 485 տող 20. «Ամա վայ վուր խափվելու պտուղնիրը հիմի խիստ սակաւացիլին». շատ ճշմարիտ է, պատճառ որ, ոչ ոք չի խաբուիլ, որովհետև ամէնքը գիտեն և կարդում են խաբօղների համար Պօղոս Առաքեալի խօսքը, թէ՝ «Որոյ գալուստն ըստ ազդեցութեան սատանայի է, ամենայն զօրութեամբ և նշանօք և արուեստիւք ստօք» 1 Տիմ. Բ. 9։(2) Տեսնում էք, դաբաղի յօդուածի կարդացողներ, որ նրա սուտ զօրութիւնը, նշանները և հնարները, ոչ այլ ինչ են, եթէ ոչ ժողովրդի սիրտը կտրել հոգևորականներից։

Դաբաղ Ղաղօն ամենայն սրտով աշխատում է ժողովրդեան մէջ խռովութիւն և շփոթութիւն գցել հոգևորականների հակառակ։ Կարծեմ թէ՝ էս վատ մարդոյ հոգւոյ նշան է, ասենք թէ քահանայից վրա ինչ մաղձ ունէր սրտումը, թափեց, էլ ընչի՞ է հասարակութեան մէջ խռովութիւն գցում։ — եր. 480 տող 13- ասում է՝ «Անասուններին էլ ինչ թափառութիւն կունենանք մինք . . . Էր շունն էլ, վուր իմանում է, թէ մէ ուրիշ շանը չարչարումին, ծէծում ին, իր ձեռնեմէն դուս էկածը անում է՝ իրպէս շան համա դլուխը յիդ է դնում։ Սրան խօմ չի՞ն խրփի ամա իր նմանին խօմ խրփիլին . . . Հիւր միդմէն ու

(2) Որի գալուստ սատանայի ազդեցութեամբ է, ամենայն սուտ զօրութեամբ և նշաններով և արուեստներով։ 1 Տիմ. Բ. 6։

հիւռի միջոցն . . . մէ նրանց տօլ էլայ չըկանք։

Ղաղօն էլ ուրիշ օրինակ չէ գտել միաբանութեան, բաց 'ի շանից, ամենևին միտքը չէ եկել նրան մեղրաճանճի միաբանութիւնը, նրանց պատերազմը իրանց պաշտպանելու համար, որ մեղուն էր օրինակ բերել, — և ոչ թէ շունը։ Երբ շանն է օրինակ բերել, մենք էլ մեր խօսքը վերջացնենք ասելով. հասկացողին մէկ, չըհասկացողին հազար։

Ռ. Երզնկեանց։

[illegible] 3/6 [illegible]
30-III-82. [illegible]